Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

15467

891.99
9-32

2003

9-32

# ՈՂՋԱԽՈՀՆ ԱՐԱՅ

ԵՐԳԵՑ
ՋԱՐՄԱՑՐ ՍՏԵՓԱՆ ՁԱՔՐԵԱՆ

ՏԵՏՐ Ա.

ԻԶՄԻՐ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Գ. ՄՍԵՐԵԱՆ
1878

3400

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. публ. Библиотека
ՀՍՍՀ-ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ Ա.
3324
39

Ի

ՅԻՇԱՏԱԿ

ՍԻՐԱՍՈՒՆ ՈՐԴԵԿԱՑ ԻՄՈՑ

# ԱՐԱՄԱՅ ԵՒ ՐՕԶԻՆԱՅԻ

ՈՐՔ ՆՆՋԵՑԻՆ ԴԵՌԱՀԱՍ

**ՆՈՒԻՐԵՄ ԶԵՐԿՍ**

ՀԱՅՐՍ
Զ. Ս. ԶԱՔՐԵԱՆ

Printed in Turkey

Printed in Turkey

# ՈՂՋԱԽՈՀՆ ԱՐԱՅ

---

## ՆՈՒԱԳ Ա·

Մելպոմենէդ վըշտանուագ ողբերգութեան վեհ դշխոյ,
Քեզ կ'աղաչեմ պերճ Մուսայդ, ազդէ՛ ինձ ալ շունչդ ազդոյ·
Եղերերգել իմ գեղեցիկ ու ողջախոհն այն Արայ
Որ ցանկութեան և վատ կըրից՝ զո՛հ սուրբ գընաց Շամիրամայ։
Դշխոյ է սա բորբոքեալ կին Ասորւոց պերճ տէրութեան
Այլ նախատինք մեծ՝ իւր ազգին, Արայ փառք տանն Արամեան,
Շընչէ՛, Մուսա՛յ, շունչդ զօրաւոր բըլբուլ Վենէին փիպասան,
Որու ձըրից յիշատակներ՝ յիշեն դարեր յաւիտեան։
— Երբ Շամիրամ առանձնացած կայր իր պալատ մըտախոհ,
Նոյն միջոցին ներկայացան երեք անձինք մեծախոհ.
Աւագանւոյ կարգէ էին. Շամիրամ հոն բազմեցուց,
Ասոնք Հայոց երկիրներէն եկած էին. ու հարցուց,
«Ի՞նչ լուր բերիք նոյն աշխարհէն, ըրէք անոնց գլխ ծանօթ,
Յօժարակամ կ'ուզեմ լըսել ձեզմէ. ինձ էք քաջ ծանօթ։
Իմ ամուսին Նինոսն այն քաջ՝ էր համակիր նոյն երկրին,
Ինչպէս գիտէք՝ նա մարգարտեայ պըսակ տուաւ Արամին։
Նինոս կ'ըսէր ինձ թէ Արամ ունէր որդի հրաշածին,
Որու նըման չէ ուրիշ տեղ երբէք տեսած՝ գեղածին.
Շատ տարիներ արդէն սահած՝ այն պատմութիւնն ինձ ըրած,
Անշուշտ հիմա Արամայ տեղ՝ որդին իշխէ հայրենեաց,

Ինձ այն ատեն տուաւ անուն, լաւ չեմ յիշեր ես հիմա,
Եթէ՝ երբէք չեմ սխալիր՝ պիտի ըլլայ նա Արայ։
Մեծ անձկանօք կը բաղձամ ես իմանալ այս ամեն բան,
Որով ըղձեր՝ թագուհին գոհ պիտի ընէք յաւիտեան»։
Մին որ Հայոց երկրին վըրայ միշտ հիացած կը մընար,
Մեծ ըզմայլմամբ զայն ըսկըսաւ գովել որչափ որ կրնար։
«Առաջին քայլ նետած ատենս ըսի ինքնին ես մէկէն
Ի՜նչ հրաշալի հող կը մտնեմ. ինչ գերազանց մեր երկրէն։
Հոն էր կարծես աստուածներու դըրախտ ընտիր կայարան,
Քանզի մոգեն աչքըդ շուտով այն ծաղիկներ բիւրազան։
Հոն կ'երեւայ արարչակերտ Նախարքային արքունիք,
Ամենագեղ հոն սիգաճեմ ճեմած Դշխոյն գեղեցիկ.
Զըւարթ է տեղն, ճոխ և ընտիր ծառովք, աղբերբք յորդահոս։
Ոչ մի ծառին, ոչ մի դաշտին, ոչ մի ծաղկին նմանն հոս։
Եփրատ, Տիգրիս, Փիսոն, Գեհոն, քառավըտակ են հոն ուխ
Հոն բիւրակնեան անթիւ աղբերք հոսեն ջուրեր յորդաբուխ։
Հոն հրաշազան կան վարդենիք որոնք գեղով արփային
Անմահութեան հոտ կը բուրեն մարդից վրայ ճեմողին։
Թէ կարելի լինէր՝ փունջ մի ծաղկանց հոս ձեզ 'ի նուէր
Կը բերէի. տեսնել ինչպէս հոն ամեն բան յորդ սփռեր։
Ան լեռներէն մի սիւք ծըծողն՝ կ'առնու հազար կեանք անձին
Անոր ջըրէն ումպ մ'արբողին բերնէն հազար փառք լըսին։
Զեմ ես կարող երբէք բերնով ձեզ նըկարել հողն որչափ
Է արգաւանդ, ինչ գեղազան սոխակք և հաւք կան անչափ։
Պաղոց նըմանն ես չըտեսի ոչ մի աշխարհ յիրաւի,
Ծիրան, խաղող, խնձոր, սալոր, թուզ, դեղձ և սեխ են կարի։
Լերանց վըրայ ունի ամեն տեսակ ընտիր նա հանքեր
Արծաթ, պըղինձ, ոսկի, զամենք ես անկարող քեզ պատմել։
Տեսայ նաև շըքեղ շէնքեր և պալատներ փառաւոր
Որոնք ճարտար ձեռով կերտած՝ աչաց թըւին գեղաւոր.
Հոն Արմաւիր հայ իշխանաց մայրաքաղաք անուանի
Իր գեղեցիկ յօրինուածովք և իր դիրքով վեհ փայլի»։
Միւսն՝ որ յաճախ Արայի հետ կը տեսնուէր 'ի պալատ,
Համակրական լի զգացմամբ ըսկըսաւ զայս եղանակ.
«Երկու տարի այնչափ աշխարհ ես ժուռ եկայ ընդարձակ,
Այլ յիրաւի երբէք մարդոց մէջ չըտեսայ նըմանակ.



Թող որ երկինք զան զարդարեր ամեն ձիրքով վեհապանծ,
Երբ զառաջինն ես տեսի զան՝ ըսի յերկնից այս իջած,
Գեղեցկութիւն հիանալի վըրան սփռուած լինին,
Տեսածդ ատեն՝ կը շուարիս, կարծես թէ է չքնաղ կին։
Տաղանդ, հանճար գեր քան ընական փայլէր յԱրայ յիրաւի,
Խօսածս ատեն՝ գըրաւեցայ դէմքէն, խօսքէն ես կարի.
Մեղըր և կաթ կարծես ծորէր շրթունքներէն գեղեցիկ.
Գուցէ անոր գեղեցկութեան կը նախանձի և Աստղիկ»։
Երրորդն անդէն խօսքն ընդմիջեց «—Ճշմարիտ են բանք սորա,
Վերջին օրերս երբ մըտադիր էինք դառնալ մեր աշխարհ.
Ինչ ատեն սա ջերմ տեսութեամբ ժամերով հետ կը խօսէր,
Ես հոն խուց մի առանձնացած՝ վրձինս իր դէմք նըկարէր.
Ես՝ որ գիտես սոյն արհեստին մանկութենէս յաջողած՝
Գործերուս շատն՝ տես պալատանդ և ուրիշ տանց զարդ եղած։
Եւ ըստ որում մահացուաց մէջ անոր նըման գեղանի
Չէի տեսած, մըտածեցի զան գըծագրել 'ի վիմի։
Թէև կարի աշխատեցայ ես կատարեալ զայն գըծել
Բայց անհընար ինձ թուեցաւ, էր գերընական մի պատկեր։
Թէ Մեծութիւն Ձեր փափաքի՝ զան նուիրել կը փութամ,
Որ պալատիդ ըլլայ մի զարդ, զարդ արդարև յոյժ փարթամ»։
Զայն Շամիրամ դեռ չտեսած սըրտով մըտքով 'ի յԱրայ
Սիրահարեցաւ, և աղաչեց բերել պատկեր շուտ նորա։
Պատկերահանն թըռչունի պէս թըռաւ շուտ իւր ապարան,
Բերաւ իսկոյն թագուհիին. թագուհին կաց յափշութեան։
Անկնառոյց հայէր անոր, սէրն կը հոսէր յանդգայն.
Ու հայելին չէր յագենար, լըռեց քանի մի վայրկեան.
«Շընորհապարտ եմ, ով տեարք, որ զայս ընտիր ինձ նուէր
Նուիրեցիք, ըղձիխարէն՝ արժան է ինձ՝ ձեզ ընել.
Իմ պալատիս զարդն առաջին ըլլայ, այո, այս պիտի,
Կ'ուզեմ գիտնալ թէ սոյն Արայ կարգըւած՝ թէ ամուրի»։
Ըսաւ անդէն երրորդն իսկոյն. «Յո՜յժ սիրելի ամուսին
Ունի, նաև քառեակ որդիք, որք իրենց հօր նըմանին»։
Այս և սոնց նըման խօսքեր հոն ընելով՝ զատուեցան.
Բայց Արայի դէմք գեղեցիկ՝ ազդեցին մեծ սէր կընկան.
Շամիրամայ աչք՝ պատկերին վըրայ յառած՝ հոն կեցան,
Անյագաբար զայն համբուրէր, սիրահարեցաւ յոյժ 'ի յայն։

Կանչեց շուտով իւր Մքոնրիմ, ցուցուց անոր զայն պատկեր՝
Ըսքանչացաւ, և նա հարցուց «Ո՞ւրկէ տուիր զայս բերել։
Ես չեմ կարծեր, մեր երկրի մէջ ըլլայ սանկ գեղեցիկ.
Չէ սա կարծես մարդոյ սեռէն, սա՛ երկնային հրեշտակիկ։
Թէ կենդանի՝ սա հրաշագեղ, քե՛զ է միայն արժանի.
Երնէկ ասոր որ 'տի ըլլայ այր՝ Թագուհւոյդ մեր երկրի։
Բամբիշք, տիկնայք բիւր երանի պիտի կարդան միշտ քեզի,
Որ մանկացուաց մէջ՝ այսպիսի գըտար մարդ մի գեղանի.
Ի՞նչ կ'սպասես, ղրկէ պատգամ բերել փառօք զան մեզի,
Չեմ կարծեր որ սա բռորեն դասէ ըլլայ սերունդի։
—Իշխան է պերճ, Մքոնրիմդ իմ, Հայոց մեծաց սա երկրի,
Զան Գեղեցիկ Արայ կոչեն, բայց չէ, աւա՜ղ, ամուրի»։
— Թո՛ղ ըլլայ ան ամուսնացած, միթէ յիմա՞ր 'տի լինի,
Որ չուզենայ մեծահամբաւ Թագուհւոյդ դ'ըլ ընկեր մի.
Միթէ չէ՞ նա լըսած երբէք Մեծիդ անուն ահաւոր,
Որ նուաճեց դըրօշին տակ՝ այսչափ ազգեր մեծազօր.
Միթէ չէ՞ նա մարդ փառատենչ, որ գոլով այր Դըշխոյիդ,
Իշխէ պիտի այսչափ ազգաց վըրայ. ըլլա՜յ երջանիկ։
Ա՛դէ, յըղէ՛ անոր պատգամ նուէրներով բեռնալիր,
Տե՛ս թէ ի՛նչպէս կը հաւանի Թագուհւոյդ ոտք խոնարհիլ»։
Այսպէս երկուքն որոշեցին յըղել 'ի Հայս մի պատգամ,
Եւ մեծ խոստմամբք նոյն գեղազուն Արան բերել 'ի հաւան։
Յետ այնորիկ հէքն Շամիրամ կը բորբոքէր սէրն յԱրայ,
Զունէր ո՛չ նինջ և ո՛չ հանգիստ, իւր խելք ու միտք առ Նա։
Ականակիտ թագ մի ընտիր, և այլ նուէրք թանկագին,
Տալ պատրաստել, քանի մ'օրէն ղրկել զանոնք իւր Սէրին։
Իւր ուշն այնչափ էր սեւեռած հիանալի պատկերին,
Որ զան յաճախ գըրկէր սեղմէր և համբուրէր ջերմագին.
Շատ գիշերներ իւր անուրջին մէջ կը տեսնէր զայն իւր Սէր,
Անոր դէմքովն ու տեսութեամբ զըւարճանայր չէր յագեր.
Երբ արթննար յոյժ կը տըխրէր, ապերջանիկ զինք սեպէր.
Եւ հառաչէր. Երբ իմ Արայ հոս 'տի ըլլայ ինձ ընկեր։
Ընտրեց ըզմին յԱւագանւոյ, զոր ինք յարգէր սրտագին,
Մարդ մի՝ որոյ ճարտար բերան որսայր ըզխիղճ մարդկային.
Մքոնրմին հետ՝ պարզեց անոր զայս կարևոր իւր խնդիր,
Ըսաւ անոր, «Թէ յաջողիս, քեզ շատ նուէրք կան ընտիր»։



—Անհոգ եղիր, ով Թագուհի, Ազնուականն այն կրկնեց,
Հաւատի եմ, որ աստուածք մեր զիս 'տի ընեն պարզերես.
Ինչպէս ուրիշ կէտերու մէջ ծառայած եմ Տիրուհւոյս,
Լե՛ր ապահով, սրտովս պիտի ես աշխատիմ, ունիմ յոյս»։
Այսպէս հէքին հանդարտեցուց սիրտըն կարի տաչորած,
Առաւ նուէրքն, ելաւ ճամբայ, եկաւ յաշխարհ Հայկազանց։
Շաբաթ մի նա քաղաքին մէջ լաւ մը ճեմելէ վերջը՝
Շատ բան ճարտարն այն իմացաւ, վճռեց գործել խորհածը։
Հրաման խընդրեց ներկայանալ Հայոց մեծաց դիւցազնին,
Որ մեծարեց զայն յիւր պալատ, տեսնուեցան սըրտագին։
Մեծ հիացում կալաւ ըզհիւրն՝ տեսնելով դէմք Արային,
Ըսաւ միտքէն, «Սա՛ յիրաւի արժանաւո՛ր Դըշխոյին».
Իր ճարտարան լեզուն բացաւ, գըրաւեց սիրտ Արային,
Որ դեռ անգէտ թէ առ ի՛նչ նա ղրկած կուգէ Դշխոյին։
Հիւրասիրեց արքունեաց մէջ, շուք ու յարգանք չըռայլեց,
Բայց հետամուտ էր հասկընալ գալուն պատճառ, և լըռեց։
Հիւրն յԱրայէ յատուկ ժամ մի խընդրեց խօսել առանձին,
«Ուր 'տի յայտնեմ ձեզ ամեն բան, ըսաւ, կամք մեր Դըշխոյին».
Յայս բան՝ Արայ խըռովեցաւ, փոխուեցաւ գոյն երեսին,
Որ մի գուցէ եկած ըլլար պահանջել ինչ դժուարին։]
«Ըսէք, Պատգամ վեհ Դըշխոյի Ասորւոց մեծ Տէրութեան,
Կ'ուզեմ գիտնալ թէ ի՛նչ է կամք Շամիրամայ ու հրաման։
—Լե՛ր դու հանգիստ, ո՛վ քաջդ Արայ. Դըշխոյն չէ քեզ թշնամի.
Վըսեմութիւն Ներա քեզ հետ՝ պէս մքոնրմի կը խօսի.
Նէ կը սիրէ ըզձեզ նոյն և ձեր Ազգ և ձեր Հայրենիք,
Յապացոյց այսմ՝ յո՛ւշ քեզ Պըսակ՝ հօրդ նուիրուած՝ գեղեցիկ.
Յապացոյց այսմ՝ Նէ իմ ձեռամբ տես ձեզ նուէրըս անգին
Յըղէ, որով լաւ համոզուիք՝ թէ սիրէ ձեզ սըրտագին.
Յաւագանւոյ Ներա եմ ես. գիտցիր, Ա՛րայ, ո՛չ ոք զայս
Գըտած շընորհ մեր Դըշխոյէն, ճանչցիր յարգ սոյն շընորհաց։
—Շընորհ ունիմ ես մեծապէս քու Դըշխոյիդ ըզգացման,
Ըսաւ Արայ, այլ անգէտ եմ այսչափ սիրոյն պատճառման.
Կը զարմանամ. Ներա առջև ի՛նչ գործ մի մեծ ես ըրած,
Որով դատէ զիս արժանի այսչափ բազում յարգանաց»։
—Զարմանալու Նէ մեծարել գիտէ քաջ, ո՛վ Մեծդ Արայ,
Անցեալ տարի մեզմէ երեք հոս քեզ եկած հիւր առհա.

Կանչեց շուտով իւր Մքոնրիմ, ցուցուց անոր զայն պատկեր.
Ըսքանչացաւ, և նա հարցուց «Ո՞ւրկէ տուիր զայս բերել։
Ես չեմ կարծեր, մեր երկրի մէջ ըլլայ ասանկ գեղեցիկ.
Չէ սա կարծես մարդոյ սեռէն, սա՛ երկնային հրեշտակիկ։
Թէ կենդանի՝ սա հրաշագեղ, քեզ է միայն արժանի.
Երնէկ աստ որ 'տի ըլլայ այր՝ Թագուհւոյդ մեր երկրի։
Բամբիշք, տիկնայք բիւր երանի պիտի կարդան միշտ քեզի,
Որ մահացուաց մէջ՝ այսպիսի գտար մարդ մի գեղանի.
Ի՞նչ կ'սպասես, ղրկէ պատգամ բերել փառօք զան մեզի,
Չեմ կարծեր որ սա բոտորին դառնէ ըլլայ սերունդի։
—Իշխան է պերճ, Մքոնրիմդ իմ, Հայոց մեծաց սա երկրի,
Զան Գեղեցիկ Արայ կոչեն, բայց չէ՛, աւա՜ղ, ամուրի»։
—Թո՛ղ ըլլայ նա ամուսնացած, միթէ յիմա՞ր 'տի լինի,
Որ չըտենչայ մեծահամբաւ Թագուհւոյդ գոլ ընկեր մի.
Միթէ չէ՞ նա լըսած երբէք Մեծիդ անուն ահաւոր,
Որ նուաճեց դըրօշին տակ՝ այսչափ ազգեր մեծազօր.
Միթէ չէ՞ նա մարդ փառատենչ, որ գոլով այր Դըշխոյիդ,
Իշխէ պիտի այսչափ ազգաց վըրայ. ըլլա՜յ երջանիկ։
Ա՛ղէ, յըղէ՛ անոր պատգամ նուէրներով բըռնալիր,
Տե՛ս թէ ի՞նչպէս կը հաւանի Թագուհւոյդ ոտք խոնարհիլ»։
Այսպէս երկուքն որոշեցին յըղել 'ի Հայս մի պատգամ,
Եւ մեծ խոստմամբք նոյն գեղցաղուն Արան բերել 'ի հաւան։
Յետ այնորիկ հէքն Շամիրամ կը բորբոքէր սէրն յԱրայ,
Չունէր ո՛չ նինջ և ո՛չ հանգիստ, իւր խելք ու միտք առաւ նա։
Ականակուռ թագ մի ընտիր, և այլ նուէրք թանկագին,
Տայր պատրաստել, քանի մ'օրէն ղրկել զանոնք իւր Սէրին։
Իւր ուշն այնչափ էր սեւեռած հիանալի պատկերին,
Որ զան յաճախ գըրկէր սեղմէր և համբուրէր ջերմագին.
Շատ գիշերներ իւր անուրջին մէջ կը տեսնէր զայն իւր Սէր,
Անոր դէմքովն ու տեսութեամբ զըւարճանայր չէր յագեր.
Երբ արթննար յոյժ կը տըխրէր, ապերջանիկ զինք սեպէր.
Եւ հառաչէր. Երբ իմ Արայ հոս 'տի ըլլայ ինձ ընկեր։
Ընտրեց բզմին յԱւագանւոյ, զոր ինք յարգէր սրտագին,
Մարդ մի՝ որոյ ճարտար բերան որսայր ըզսիրտ մարդկային.
Մքոնրիմին հետ՝ պարզեց անոր զայս կարևոր իւր խնդիր,
Ըսաւ անոր, «Թէ յաջողիս, քեզ շատ նուէրք կան ընտիր»։



—Անհոգ եղիր, ով Թագուհի, Ազնուականն այն կրկնեց,
Հաւատի եմ, որ աստուածք մեր զիս 'տի ընեն պարզերես.
Ինչպէս ուրիշ կէտերու մէջ ծառայած եմ Տիրուհւոյս,
Լե՛ր ապահով, սրտովս պիտի ես աշխատիմ, ունիմ յոյս»։
Այսպէս հիւքին հանդարտեցուց սիրտն կարի տոչորած,
Առաւ նուէրքն, ելաւ ճամբայ, եկաւ յաշխարհ Հայկազանց։
Շաբաթ մի նա քաղաքին մէջ լաւ մը ճեմելէ վերջը՝
Շատ բան ճարտարն այն իմացաւ, վճռեց գործել խորհածը։
Հրաման խընդրեց ներկայանալ Հայոց մեծաց գեղցաղնին,
Որ մեծարեց զայն յիւր պալատ, տեսնուեցան սըրտագին։
Մեծ հիացում կալաւ բըշխուրն՝ տեսնելով դէմք Արային,
Ըսաւ մըտքէն, «Սա՛ յիրաւի արժանաւո՛ր Դըշխոյին».
Իր ճարտասան լեզուն բացաւ, դըրաւեց սիրտ Արային,
Որ դեռ անգէտ թէ առ ի՛նչ նա ղրկած կողմէ Դշխոյին։
Հիւրասիրեց արքունեաց մէջ, շուք ու յարգանք շըռայլեց,
Բայց հետամուտ էր հասկընալ գալուն պատճառ, և լըռեց։
Հիւրն յԱրայէ յատուկ ժամ մի խընդրեց խօսել առանձին,
«Ուր 'տի յայտնեմ ձեզ ամեն բան, ըսաւ, կամք մեր Դըշխոյին».
Յայս բան՝ Արայ խըռովեցաւ, փոխուեցաւ գոյն երեսին,
Որ մի գուցէ եկած ըլլար պահանջել ինչ գժուարին։]
«Ըսէք, Պատգամ վեհ Դըշխոյի Ասորւոց մեծ Տէրութեան,
Կ'ուզեմ գիտնալ թէ ինչ է կամք Շամիրամայ ու հրաման։
—Լեր դու հանգիստ, ով քաջդ Արայ. Դըշխոյն չէ քեզ թշնամի.
Վըսեմութիւն Ներա քեզ հետ՝ պէս մտերմի կը խօսի.
Նէ կը սիրէ ըզձեզ նոյն և ձեր Ազգ և ձեր Հայրենիք,
Յապացոյց այսմ՝ յուշ քեզ Պըսակ՝ հօրդ նուիրուած՝ գեղեցիկ.
Յապացոյց այսմ՝ Նէ իմ ձեռամբ տես ձեզ նուէրքս անգին
Յըղէ, որով լաւ հասկընաք՝ թէ սիրէ ձեզ սըրտագին.
Յաւագանւոյ Ներա եմ ես. գիտցէք, Ա՛րայ, ո՛չ ոք զայս
Գիտած չընորհ մեր Դըշխոյէն, ճանչցիր յարգ սոյն շընորհաց։
—Շընորհ ունիմ ես մեծապէս քու Դըշխոյիդ ըզգացման,
Ըսաւ Արայ, այլ անգէտ եմ այսչափ սիրոյն պատճառման.
Կը զարմանամ. Ներա առջև ի՛նչ գործ մի մեծ ես ըրած,
Որով դառնէ զիս արժանի այսչափ բարձում յարգանաց»։
—Զարմանալուս Նէ մեծարել գիտէ քաջ, ո՛վ Մեծդ Արայ,
Անցեալ տարի մեզմէ երեք հոս քեզ եկած հիւր ահա.

Ընտիր ընտիր քո բարոյից ձիրք գովեցին Դըշխոյին,
Որով Նէրա սէր յաւելաւ. սէր զոր չըտայ ոչ մէկին.
Եթէ գիտնաք այն անպայման սէրէն քաղել ձեզ օգուտ,
Ո՛չ մէկն յերկրի ձեզ հաւասար. ճիշդ են խօսքերս և ո՛չ սուտ.
Եթէ սիրէք և դուք ըզնէ, ինչպէս սիրէ նէ ըզձեզ՝
Գիտցի՛ք չէ թէ Հայոց միայն, այլ շատ ազգաց կոչուիք Մեծ։
—Ներեցէ՛ք ինձ, Ազնուականդ, կրկնեց անդէն մերն Արայ,
Ձեր Թագուհւոյն մեծարանաց ինչ իմ կողմէս առարկայ.
Ես չեմ կարող թափանցել ձեր այս ոլորուն խօսքերուն,
Ըսէ՛ք յայտնի, ինչ եմ ըրած արժանաւոր իւր սիրոյն.
Ինձ պարզապէս ըսէ՛ք, խնդրեմ, ինչ է Ձեր կամք Դըշխոյին,
Եթէ հընար՝ զայն կատարեմ, ամեն ինչ է մեզ դիւրին։
—Ըսեմ. Արայ, քաջ աղերսիդ, լո՛ւր, այս է կամք Տիրուհւոյս,
Նէ սիրէ ձեզ և փոխադարձն ձեզմէ խընդրէ՝ 'ի մեծ յոյս.
Եթէ ընէ՛ք իւր կամք՝ գիտցէ՛ք, կոչուիք պիտի Տէր Տէրանց,
Ինչպէս ըսի՝ ձեզ հաւասար ո՛ք չըլլայ մէջ մահկացուաց։
Աւելի ձեզ պարզեմ իւր կամք, Նէ սիրահար է քեզի,
Քեզ ամուսին իրեն ընտրեց ո՛իշխան Ազգին Ասորի»։
Անակընկալ խօսքիս վըրայ Արայ եղաւ այլ յայլմէ,
Կաց ապարան փայլկեան մի նա, քըրտինք հոսէր իր ճակտէ.
Վըրդովեցաւ, գողցես եղաւ չանիթահար նոյն միջոցին.
Հարցուց Պատգամին —Ինչո՞ւ, Արայ, այլայլեցար ըրնաւին.
Հիմ փոխանակ դու հրճուելու՝ ըզգեցար դէմք տըխրադին,
Միթէ Դըշխոյս առաջարկէ՞ց քեզ. ըսէ՛, ինչ անհնարին.
Միթէ հընա՞ր է որ մերժես խընդիր Մեծի դըշխոյին,
Որու բաղումք 'ի յԱրքայից ցանկան ըլլալ ամուսին.
Ըսէ՛. ինչո՞ւ այդպէս տխրիս, մի՛ կըրեր դու երկիւղ մի,
Քեզ Շամիրամ ըրբռանց պաշտէ. ո՛ն, պարզէ սիրտդ դու ինծի
—Ազնուականդ, այն առաջարկ 'ի Դըշխոյէդ մեծափառ
Էր անհընար ինծի յուսալ, զի զան ճանչեմ ես արդար.
Թէ կին, զաւակք չունենայի՝ խոնարհէի իւր կամաց,
Եւ երբ յայնժամ ես մերժէի՝ սխալէի մի 'յիմարաց.
Բայց տես ունիմ պալատիս մէջ ինձ ամուսին անձնուէր,
Եւ զաւակո՛նք հայրենասէր, որ են Երկնից ինձ նուէր.
Ի՞նչպէս կըրնամ թողուլ զասոնք. ըլլալ ընկեր Դըշխոյիդ,
Ո՛չ ապաքէն պիտի գործեմ ընդդէմ սիրոյ անկեղծիկ.



Դու ամեն ինչ լաւ կը դատես, արդարապէս ըսէ ինձ,
Երբ յանձն առնումես զայս՝ միթէ չե՞մ հարուածիր 'ի յԵրկնից։
—Ընկեր զոյգդ դու Թագուհւոյս՝ ո՛չ դու առնուք 'ոի մերժես,
Ըսաւ Պատգամին, միայն թէ զԱյն՝ կինդ առաջին 'ոի սեպես.
Եւ քոյդ Նուարդ կարծեմ առոր կ'ըլլայ անշուշտ համաձայն,
Ո՛չ ոք ըզձեզ, գիտցի՛ր, Արայ, 'ոի մեղադրէ յաւիտեան»։
—Խընդրեմ, Պատգամիդ, մի՛ այլնուագ կրկներ ինձ զայդ ըրնաւին,
Վիշտ ինձ կարի դուք պատճառէ՛ք, ներէ՛ք, խնդրեմ ես կըրկին,
Ես ուխտած եմ սիրել զՆուարդ, այո՛, մինչև չունչս յետին,
Ոչինչ կարող Նէրա սէրէն բաժնել ըզսիրտ Արային.
Հաստատ է իմ սէրս առ Նուարդ, Նէրա համար ամեն բան
Ես պատրաստ եմ զոհել, ճանչնայ թող Շամիրամ՝ Հայ իշխանն,
Թագ և պըսակ և ամեն ինչ երկրի վըրայ թանկագին,
Իմ Նուարդիս երբէք սիրոյն չ'հաւասարիր ըրնաւին.
Նէ իմ սիրոյս, ես Նէրայն մէջ կ'ապրիմք մի սիրտ անանջատ,
Գիտցի՛ք, ըզմեզ յիրարց զատէ միայն Պարկեանն այն մըրատ»։
Ցապուշ հարաւ Պատգամին ընդ այս, —Արայ, ճիշդ են քո խօսքեր,
Բայց մեծազօր Տիրուհի մի առաջարկէ այս բաներ.
Որու դէմքէ ազգք և ազինք կը սարսափին համօրէն,
Ասոր փախճանն լաւ չեմ դըտներ. չըլլայ զըղջաս դու վերջէն.
Թէ անծանօթ ես զօրութեան՝ ըսեմ լոկ իմ այս խօսքով,
Մեծ թագաւորք և վեհ իշխանք խոնարհած են ոտքին քով։
Կ'ուզե՞ս դընել ազգդ ու երկիրդ անխելքութեամբ 'ի վըտանգ,
Խորհէ՛, որչափ թշուառութեանց պիտի ըլլաս դու պատճառք.
Շամիրամայ մեծ պետութեան դէմ ո՞վ կարող, ըսէ ինձ . . .
Ահա ես իմ պարտք ըրբռազան կատարեցի անկեղծիկ.
Ուրեմն վերջին ունիս քո վըճիռ, բայց լաւ խորհէ, Վեհազուն,
Մեծ խըթանի դէմ աքացես, խորհէ՛, կ'ըսեմ, կրկին դուն»։
—Իմ վճռական որոշումն է մերժել կամք Ձեր Դըշխոյին,
Եւ յայլ նուագ մի զայդ կրկներ վաս առաջարկ՝ Արային,
Արայ պատրաստ մեռնիլ 'ի սէր իւր Նուարդին սիրելի,
Այս է վերջին ուխտ Արայի, գիտնայ զայս քո Տիրուհի.
Զանխմուրիչ քեզ բան խօսիլ, Պատգամիդ, խօսքիս տամ վախճան,
Թէ համոզուի՝ յարգեմ ըզնէ, թէ ո՛չ՝ կազմ եմ յամեն բան»։
Ասանք Պատգամին ընդունելով՝ ամօթահա՛ր մեկնեցաւ,
Տըրտում սըխուր և անյաջող իւր Տիրուհւոյն քովդարձաւ։

## ՏԵՍԻԼ Բ.

Բորբոքեան այն երբ վերադարձ տորա լըսեց, անհամբեր
Զայն իւր պալատականչել տուաւ թէ ինչ Սերէն լուր բերէր.
Երբ տրտմագին տես ըզպատգամն, և ինք կարի տխրեցաւ,
Հարցուց անոր, —Ազնուականդ, ինչ քեզ արդեօք դիպեցաւ:
Ինձ թուի թէ լուր անյաջող բերիր սիրուն Արայէս,
Ի՞նչ վիշտ արդեօք սրտակեկիծ տաս ինձ պիտի, ըզգամ ես»:
—Իմ Մեծազօր պերճ Տիրուհիս, դէմքէս, այո, ես գուշակ,
Անոր վըրայ քաջ կարդացիր վըճիռ Սիրոյդ՝ բովանդակ.
Նա յամառի յիմարաբար տալ հաճութիւն փափաքիդ.
Կամք Տիրուհւոյդ բոլորովին մերժէ Արայն յետամիտ.
Ձեր Մեծութեան խոստմունք ամեն նըկարեցի մի առ մի,
Այլ նորա սէր գըտայ հաստատ յիւրն ամուսին սիրելի.
Ամրապինդ է ուխտին վըրայ, ոչ մեծութիւնք աշխարհի
Ո՛չ են կարող պատրել զնա, յըսպառնալեաց չերկնչի.
Աւելի լաւ նա համարի մեռնել 'ի սէր ընտանեաց
Քան խոնարհել ակամակոր թագին առջև՝ մեծապանծ.
Որպէս զի այն նախատանաց լուծենք վըրէժ Արայէ,
Մեծդ Թագուհի, այսօրուընէ մեզ պատրաստել արժան է.
Գուցէ ահեղ մեր բանակէն զանգիտելով նա, իսկոյն
Իւր յամառեալ միտքը փոխէ, կին իւր ճանչէ մեր Դըշխոյն.
Հայոց ուժին գըտայ ներկուռ, երկիր դիւրին ծանօթ եմ,
Չեն Հայք առակ մեր քաջերուն մեծ զօրութեան կալ ընդդէմ.
Ապահով եմ որ Հայ խուժանն երբ տեսնէ մեր զօրք անթիւ՝
Պիտի կասի մարտ մըղելէ, դողայ մեզմէ մեծ ահիւ:
Ա՛դէ, հրաման տուր Մենոնի զօրապետին մեր արի,
Պարտուպատշաճ պատրաստութիւն ընել մեր քաջ բանակի»:



Զայս լսելով՝ հրաման խնդրեց Շամիրամէն՝ մեկնելու,
Եւ Շամիրամ մեծ թախծանաց տըւաւ զինքն ու վըշտերու.
Իրեն սենեակ առանձնացած՝ ուժգին սըրտէն հառաչէր,
Ոչ մի բանով տալ փարատել կըրնար սըրտին կարեվէր,
Իրեն համար սուգ էր նոյն օր, փետէր մազերն իւր վշտէն,
Մոլեգնութիւն դէմքին վըրայ կարծես գըծուէր նոյն օրէն.
Եւ հառաչանք ծանր արձակէր, ոտքերն գետին կը զարնէր
Գոչէր ուժգին իբր խելագար, ոտքի վերայ աստանդէր:
Իւր Մըտերիմն այն մըռընչիւնք լսելով հոն ըշտապեց,
Տեսնելով զայն դառն 'ի վիճակ՝ իսկոյն սերտիւ զնա գըրկեց.
«Տիրուհիդ իմ. ինչ բան քըզքեզ, աւա՜ղ, այսչափ վըրդովէ.
Քու Մըտերմէդ ինչ կը պահես, ա՜դէ, քու սիրտդ ինձ պարզէ.
Ցարդ ես քըզքեզ այսպէս տըժգոյն չէի տեսած ընաւէն,
Ա՛դէ, Դըշխոյ, պատմէ ինձ դու, ինչ է պատճառ քո վըշտին»:
—Ա՛խ, Մըտերիմդ, կարի ծանր են սըրտիս վիշտեր այսօրուան
Կարծեմ ոչ մի կարող պիտի ըլլայ գըտնել դու դարման,
Բերաւ պատգամն իմ Արայէս իր վըճռական պատասխան.
Նա չըհաճիր, աւա՜ղ, ըլլալ ինձ ամուսին յաւիտեան.
Արամս խորհիմ, թէ ինձ եղած այս նախատինք մշտնջեան,
Ա՛խ. այն վըշտեր զիս քիչ օրէն պիտի տանին գերեզման»:
—Լեր դու հանդարտ, մի՛ վըհատիր, Տիրուհիդ իմ սիրելի.
Զայն դիւրին է ուրիշ կերպով անշուշտ որսալ շուտ մեզի.
Սիրտ առ. այդպէս սրտեր վեհանձն չեն ըլքանիր փութապէս,
Յիշէ որ դու Շամիրամ ես, սիրտ առնական միշտ կրես.
Սիրտ առ, երբէք ինձ անհընար չըթուիր զնա նուաճել,
Ցուցո՛ւր քո ոյժ, տես թէ ինչպէս 'տի զիջանի անարգել.
Տուր մէկ կողմէն ոյժ բանակիդ. ս'ըպառնական այլ պատգամ
Յըղէ, եթէ չըխոնարհիր. ըսէ «Ունինք պատերազմ»:
Վաւաշոտին սիրտ մեղմացաւ իւր Մըտերմին խօսքերէն,
Ըստ որոշմանն՝ ըրաւ հրաման գընալ պատգամ այլ նորէն:
Եկաւ բանբերն, ներկայացաւ առաջին Արային,
Որ անխըռով հարցուց անոր՝ «Ըսէ, ինչ կամք Դշխոյին»:
Սկիզբն ըրաւ պատգամն խօսիլ, Արայ կ'ըլլար ունկնդիր,
Մէն մի հարցմանց նորա՝ կուտար պատասխաններ յոյժ ընտիր:
—Արայ, ինչո՞ւ յամառիս դու մեր Թագուհւոյն կամաց դէմ.
Միթէ չես դու քաջիկ ծանօթ անոր ուժին բազմադէմ.

Զի՞ս գիտեր թէ Նէրա դէմքէն դողայ ողջոյն Ասիա,
Տընով տեղով կարող ջնջել բզբեղ-իշխեա յո՛յր վերայ,
Ո՛ն. խոնարհէ Նէրա կամաց, ըլլա՛ս գլխոյ մեր իշխան,
Թէ ոչ՝ գըլխիդ վերայ պիտի շողան գործիք Արիւեան»։
—Զեմ ես, իշխան, ո՛ք վատասիրտ. Արամեան եմ ես որդի,
Ցորմէ երեք մեծ ազգութիւնք՝ սարսափեցան յոյժ կարի.
Նորա եմ ես ծին հարազատ, նոյն թոռ Հայկայ դիւցազին,
Որ նախահօր ձեր Նեբրովթայ տուաւ հարուած ահագին.
Նորա արիւն կըրեմ 'ի սիրտ, նորա որդի ողջախոհ,
Ես չեմ ուզեր Շամիրամայ վատօրէն կիրքն ընել գոհ.
Ես իմ Ազգիս և քաջ զօրացս վըստահելով 'ի մեծ ոյժ
Գիտցի՛ք, խըրոխտ ձեր բազուկներ՝ կարողք ընել մեզ անոյժ։
Ա՛զէ, պատրաստ եմք մեք'ի մահ, թէ յաղթեմք՝ մեզ մեծ պարծանք
Իսկ թէ պարտիմք՝ առաքինի թաղումք անմահ յիշատակք»։
Պատգամն առած այն պատասխան՝ հեռացաւ շուտ կորակոր,
Արայ փութայ պատուէր մարտի կարգալ քաջաց իւր հզօր,
Նուարդ երկան դէմքին վերայ նըկատելով մի վրդով
Իսկոյն անոր քով մօտեցաւ, հարցուց պատճառն յոյժ մեղմով,
«Արա՛յ, ես ցարդ չէի լըսեր քեզ հարցընել թէ ընդէր
Բանի մ՚ամէն 'ի վեր դէմքէդ անցի ժըպիտն է առեր.
Ես մի տագնապ կը նըկատեմ, պատերազմի կազմութեան
Ըզբաղած ես, քու Նըւարդիդ չե՞ս հաղորդեր ամէն բան.
Ըսէ. Արա՛յ, սըրտիս հատոր, բայց ինձ քու սիրտ անկեղծիկ,
Ըլլամ բաժին և տրտմութեանդ. պատմէ, Քաջազն, հանդարտիկ»։
Այն սըրտաշարժ Նէրա խօսքէ՝ Արայ փըղձկեալ յոյժ կարի,
—Ըսեմ. Նուարդ. քեզ համառօտ, ինչեն տագնապք իմ սըրտի։
Նուա՛րդ. գիտե՞ս, չորս ամիսք են, հիւր եղաւ մեզ իշխան մի,
Նա Ասորւոց մեծ թագուհւոյն կողմէն Պատգամ էր մեզի.
Ես ցարդ քեզմէ գաղտ պահեցի, որ չըտամ մի ցաւ սըրտիդ,
Ստիպուած եմ այժմ ակներև պարզել զամէն Նուարդիդ։
Վաւաշ դըշխոյն այն Ասորւոց լսելով իմ գեղութիւն
Մեզ յըղած էր ըզնոյն պատգամ որ զիջանիմ կամքերուն.
Նա պահանջէր իզմէ որ ես՝ ըլլամ իրեն ամուսին,
Ինձ խոստանայր ըլլալ նաև Պետ ընդհանուր իր երկրին.
Սակայն ես վատ Նէրա խընդիր բոլորովին մերժեցի,
Եւ աներկիւղ կոխան ոտից ամեն խոստմունք՝ իւր ըրի։



Զիմ գեղեցիկ Նուարդ միթէ կրնամ փոխել ուրիշի՝
Որու սըրտին վըրայ կարդամ Սէր որբացան յիրաւի,
Ըսի, եթէ Դըշխոյն ինծի մահ բաղանայ անողորմ,
Զեմ զանդիտեր, չեմ՚լըքանիր. մեր աստուածք են մեծազօրմ։
Ինձ աւելորդ՝ կրկնարանել, ինչ պատասխանք համարձակ
Առաքեցի Շամիրամին, ըրի ես զայն նըշաւակ։
Ցորոց կարի՝նէ բորբոքած՝ կրկին պատգամ մեզ յըղեր
Կամ զիջանիլ իւր վատ կամաց և կամ իր հետ մարտ մըղել»։
—Առաքինիդ իմ ամուսին, պարծանք Հայոց մեծդ Արայ.
Եկո՛ւր ըզքեզ ողջագուրեմ հոգւոյ, սըրտի իմ վըրայ.
Ըզքեզ Երկինք ինձ պարգևեր նուէր ընտիր գերակայ,
Այս յիշատակդ առաքինի՝ դարուց 'ի դարս 'տի մընայ.
Զիմ սէր մաքուր քեզ նուիրած՝ հոգւո՛վս ըզքեզ պաշտէի,
Ո՛չ ինձ միայն՝ հա՛պա նաև առաքինեաց պաշտելի։
Ո՛հ. այս սիրոյդ չեմ գիտեր թէ ինչ փոխարէն ես տայի,
Սիրտդ անարատ չըքեզ թագեր՝ չը պատրեցին յիրաւի։
Այդ յիշատակ քո փառաւոր՝ փա՛ռք սերընդոցդ Հայկական,
Ցէջս մասնեից 'տի քանդակուի, դա՛րք թող յիշեն յաւիտեան։
Այսուհետև իմ արտասուքով պիտի ջնջեմ քո վըշտեր.
Մեծ իմ Արայ. մեծ մարդկան մէջ, քեզ վարձատու՝ աստուածներ։
Վեհդ Հայկազուն. ինչ Պատգամին՝ եղաւ քու խօսք վըճռական,
Ըսէ, սիրտ իմ մեծ 'ի տագնապ. ա՛հ, տատանի 'ի սոյն ժամ»։
—«Իմ վճռական այս պատասխան—Արայ պատրաստ է՝ ի մարտ,
Անթահար պատգամին ասկէ գընաց տրտում. և դունատ»։
Յուզեցաւ յոյժ սիրտ Նուարդայ, աչքն արտասուօք լեցուեցան.
«Ի՞նչ հետևանք այն պատերազմ մեզ տայ պիտի դառնութեան»։
—Զի՞ դու, Նուարդ իմ սիրանուշ, վըհատ խօսքեր արձակես,
Լեր ապահով, մեր քաջերով ըլլամք պիտի պարզերես,
Մեր նախահարց ո՛ր մէկն ցայսօր թշնամիէն յաղթուեր,
Ցիշէ՛ ըզՀայկ. յիշէ զԱրամ՝ քո վեհազուն քաջ աներ.
Վըստա՛հ յաստուածս, վըստա՛հ 'ի մեր ոյժ բանակի Հայկական,
Պիտ' արշաւե՛նք 'ի պատերազմ, տալ յաղթանակ քաջութեան.
Քեզ Նուարդիդ իրք աւարին յանձնեմ այժմէն բովանդակ,
Եւ ես մարտի պատրաստութիւն ընեմ. ատ՛նք են մեր ջանք.
Որդւոցդ վըրայ եղի՛ր հըսկող, և մինչ 'ի մարտ երթալնիս՝
Կարգա՛ պաշտպան մեր աստուածներ. թո՛ղ առանձին այժըմ զիս.

Մեր զօրապետքն ու քաջորդիք հոս կանչելով պէտք եղած՝
Ազդու պատուէրք մարտի համար անոնց տալ եմ ստիպուած։»
Նուարդ կրկին ոգեւորեալ գիւղըն Արայ գեղեցիկ՝
Արտասուաթուրմ զայն հոն թողուց, մաղթանք բրաւ անկեղծիկ։
Բայց զօրապետք, նոյն իր որդիք՝ ներկայացան Արային,
Ակնածութեամբ ողջունեցին իրենց Իշխան սիրելի։
Արայ բացած ճարտար լեզուն՝ ուղղեց անոնց սոյն խօսքեր,
Որք հաճութեամբ ուշ դրնէին, թէ ինչ Իշխանն տայ պատուէր.
«Բա՜յց որդիներս, բաւ անոնց, այսօր հօս ձեզ ժողվեցի,
Մի կարևոր ձեզ տալ պատուէր՝ առաջիկայ սակս մարտի,
Ասկէ յառաջ արդէն ձեզի մի կարճ խօսքով ազդ ըրի՝
Թէ գուցէ մարտ Ասորւոց դէմ՝ Հայոց կողմէն կը բացուի։
Պարագաներն ստիպեցին տալ իմ վճիռ վերջնական
Առաջիկայ սոյն գարնան մէջ՝ գիտցէք, ունինք պատերազմ։
Կա՛դմոս, Կո՛րդոս, քաջ իմ որդիք, և դուք զօրացս, Պետք արի,
Տեսնեմ ըզձեզ, ով տուք յաւէտ Թորգոմեան բանակի.
Զօրաց սըրտերն արծարծեցէք. ո՛ն եռանդեամբ Արիքն,
Ըրէք զանոնք կիրթ մարտիկներ, բաւէք. Թոռունք էք Հայկին.
Ցիշե՛ն ըղձայկ. յիշե՛ն զԱրամ, ինչպէս յաղթօղ թշնամեաց
Հանդիսացան, ու վանեցին թշնամին՝ մեր յաշխարհաց.
Նոցա արեա՛ն ենք մեք սերունդք, ամօթահար Շամիրամ
Ընենք, յիշելն մեր անուններ՝ դարուց 'ի դարս յաւիտեան
Առ այժմ այսչափ ձեզ իմ պատուէր, երբ տամ մարտի հրաման՝
Պատրաստ եղէք մեր քաջ զօրօք խաղալ 'ի դաշտն Արիսեան։
—Զայս գոչեցին հոն վեհազունք. «Կեցցէ Իշխան մեր Արայ,
Արժանաւո՛ր է Նա յաջորդ հայրենասէր Արամայ.
Իշխա՛ն, պատրաստ՝ վեհ հրամանիդ միշտ բազմամբ յարգանօք,
Լեր հաւատտի, Հայկազն բանակ փայլի պիտի մեծ փառօք».
Ըսին, ու՛ իրենց ակնածական տալով յարգանք Արային՝
Աշխուժալից իրենց բանակ գացին դընել 'ի կարգի,—

---



## ՅՈՒՇՔ Գ

Վառեալ Կաթոռն յԱրայի սէր՝ չունէր երբէք նիրհ աչաց,
Դո՜նէ տեսնել զան միանգամ տենչայր յերկիր Հայկազանց.
Բանակ ահեղ տուաւ կազմել, բանակ արի զօրքերէ
«Վաղիւ ամենք ըլլան պատրաստ տեսնենք Երկինք ինչ վճռէ։»
Սա նոյն գիշեր անուրջին մէջ տեսաւ երազք ահռելի,
Առտու կանուխ պատմէր զանոնք իրեն վըստահ Մըտերմի.
«Սիրելի՛դ իմ, բաւ անոր, զարհուրելի՛ մի երազ
Ո՞հ, այս գիշեր իմ Արայիս վըրայ տեսայ. և էր այս.
Դաշտի վըրայ դիականց մէջ ինկած մի 'քաջ Հայկազանց
Աչքերն անդուլ յիս էր յառած, ու թաթաւեա՜լ մէջ արեանց.
Զան տեսնելով սոսկում պատեց երակներուս մէջ յանկարծ,
Ըսի, Ո՞վ է այս դիւցազուն՝ ինչո՛ւ իր աչք յիս տընկած.
Չէր հասարակ նա մի զինուոր. փառաւո՛ր էր, գեղանի,
Երբ մերձեցայ զան շօշափել, դողացին ծունկք իմ կարի։
Ա՛յս պատկերին նըման էր դէմքն. ինկա՛յ շուտով մարեցայ
Մէ գուցէ սա՝ բաւ Սէրն իմ ըլլայ Իշխանն այն Արայ.
Ոգի մի զայն կանգնեց 'ի վեր. գոչեց, Սա պէ՞տ Հայկազանց,
Սա սիրելի՛ է Դից, զայս ես տանիմ կայան դիւցազանց.
Երանելեաց երկիրն աստ առաքինիք բազմասեն,
Պըսակ չըքեղ անոր գըլխուն յաւերժհարսունք հիւսած են».
Ծաճանչներու մէջ նա շողայր, նորա էր դէմք փառազդեաց,
Ոգին պաշտօն տանէր անոր. ինչ քաղցր՝ անոնց հայեցուած.
Զայս խօսք վերջին Ոգին ինծի բաւ ու շուտ սըլացաւ.
«Աւա՜ղ անոնց որ վատ կըրից կըծառայեն յայս աշխարհ».
Ասկէ կարի ես զարհուրած՝ զարթեայ ընդոստ շուտ քունէս,
Տե՛ս կը դողան դեռ ծնկըներս, ինչ պիտ'ըլլայ արդեօք Սէրս։



Гос. Публ. Библиотека ՀՍԽՀ-ССР им. А. Мясникяна

— Տիրուհիդ իմ, դժոն այդ խորհուրդք խանգարելով քո միտքը
Ըղձերդ այդպէս կը վրդովեն, փարատէ այդ ամենը.
Հա՛ վարդամատն տես արշալոյս ծագեց, տուր ո՛ն հրաման
Ելնէ ճամբայ բանակն ահեղ. քա՛ջքս արշաւենք Հայաստան»:
Գոչեց Դըշխոյն —Ա՛ղէ, Մենոն չուտով ձա՛յն տայ քաջերուս,
Յաջողութիւն յերկնից մաղթեմք արժանանա՛լ իմ Սիրոյս:
Սոսկալի էր տեսք բանակին, մարտիկք էին քաջամիր,
Շամիրամայ սոյն վիթխարի բանակն հասաւ մեր երկիր,
Հոն ընդարձակ դաշտի վերայ զայն զետեղեց անհամբեր
Տեսնել զԱրայն սիրակիզէր ու իւր փառս կիրք լեցընել:
Լքուեց Արայ անոնց գալուստ, ձայն կարդաց իւր բանակին
Ըլլալ պատրաստ, նախ այս խօսքերն արտասանեց Նուարդին.
«Հա՛, սիրուհիս, դառն անջատման հասաւ վայրկեան իմ ահա
Հոգիս խռովի, միտքս վրդովի, սիրտս կարի ծանրանայ,
Զօրք անհամար տես Ասորւոց՝ պատեր երկիր Արամայ
Հարկ անհրաժեշտ մեզ բաժնուիլ, դու հոգւոյս մէջ մըշտակայ.
Ընդունէ զիմ վերջին հրաժեշտ, ըղձերդ գրկեմ սիրալիր,
Քեզ կը յանձնեմ սիրուն որդիքս եղիր անոնց մայր քնքոյշ.
Ո՛հ, անհամար սոյն բոպէիս խորհուրդք ծագին սրտիս մէջ
Ձեր ամենուն սիրոյն համար տոփէ սրտիս ելևէջ:
Նուիրակա՛ն պարտք ամենուս կայ Հայրենեաց պաշտպանման,
Ըլլալ որդիք արժանաւոր մեր նախահարց քաջութեան.
Շնորհ ունիմ քեզմէ, Նուարդ, համեստափայլ ամուսին,
Եւ դու գիտես զի կ'երթամ զոհ սիրո՛յ համար Նուարդին.
Օրհնեա՛լ ըլլայ որ ցարդ կեցայ հաւատարիմ ամուսնին
Որու համար արդ զարժանի՛ն հատուցանեմ ըղձոխան.
Ափէ յաւէտ՝ չէի կրնար քեզ ցուցընել բարձըր սէր,
Քեզի համար ես առնցի սոյն աշխարհիս պերճ թագեր:
Բայց հիմ այդպէս արտասուես դու, յուղես այժմէն զիս կարի,
Բարեա՛ւ մնա, Նորէն երկինք ընեն տեսնել արժանի».
Ըսաւ, չուտ մը զօրաց առջև խնկած՝ տունէն հեռացաւ.
Նուարդ արտօսր հոսէր աչքէն. իրրու արձան հոն կեցաւ:
Իւր Հայկանոյշ դստրիկն ու միւս որդին առած՝ 'ի տաճար
Փութաց, և զայս մաղթանս առ Դիս վերառաքեց արտալար,
«Երկինք, լսէ՛ տրկար ձայնիցս, հրակէ՛ սիրոյ մեր վերայ
Վըտանգներէ զայն պահպանէ, դարձուր նորէն մեզ ըզնա,



Ինչպէս Հայկայ և Արամայ աջակցելով՝ յաղթանակ
Պարգևեցիր, նո՛յն Արայի աջակցէ՛, լո՛ւր մեր մաղթանք.
Տե՛ս ծնրադիր, բազկատարած որդւովքս ըզքեզ պաղատիմ,
Լե՛ր զօրաւիգ իմ Արայիս, պահէ՛ ըղձայս. այս՝ ուխտ իմ»:
Հասաւ Արայ բանակատեղ, դըրաւ կարգի իր զօրքեր,
Ահա կրկին Շամիրամայ կողմէն եկան պատգամներ,
Նէ ղըրկած էր զասոնք, դարձեալ աղաչել մեր պերճ Արայ
Գալ 'ի հաւան, և կատարել ըղձանկութեան կամք նէրա:
Իսկ նա քաջերն ցուցընելով՝ —Ասոնք յըղեմ ձեր վերայ
Ըսէք փառաշ ձեր Դըշխոյին՝ ասոնք առնուն վրէժս ահա:
Ըսէք, պատրաստ են Հայք 'ի մարտ, հնչեցուցէ՛ք ձեր փողեր,
Դուք դողացէ՛ք իմ քաջերէս, մեզ հետ են միշտ աստուածներ»:
Պատգամն ասոնք Շամիրամայ տարաւ ու չուտ հաղորդեց,
Նէ կատղեցաւ սաստիկ. ու հուր սըրտէն, դէմքէն դուրս ցատկեց.
«Ուրեմն վաղը նախատանացս թո՛ղ նա լուծէ դառն վըրէժ,
Պղուտոնի բընակարան երթայ իջնայ գահավէժ».—
Արայ կեցած զօրաց գըլուխ սոյն սրտառուչ յորդորներ
Կարդաց, որոց ուշադրութեամբ ամեն ոք լաւ միտ դընէր,
«Զիս, Հայկազունք, ձեզ օրինակ առէք, որդի Արամայ.
Ոգին չըքնաղ մեր նախահօր Հայկայ փայլի ձեր վերայ.
Եթէ անոնց ոգին կըրենք՝ գիտցէք, կանգնեմք յաղթանակ,
Ո՛հ. քաջութիւն մեզ զգենունք, շնորհիւ Երկնից զօրանանք.
Մի վըհատիք, քաջայոյս եմ, պիտի յաղթենք թըշնամեաց
Քանի որ քաջքդ կըրէք 'ի ձեզ հո՛ւր բոցավառ Հայրենեաց:
Ձեզմո՛վ Հայկայ ճետ բարձրանայ, ձեզմո՛վ Արայ ձեր՝ պարծի,
Ձեր քաջութեան համբաւ, այո՛, բոլոր աշխարհ տարածուի:
Ո՛հ, թէ որդիք հօրս Արամայ՝ բաւացէք մեծ զօրութիւն,
Դաշտին վերայ, ա՛ղէ, հեղէ՛ք ձեր թըշնամեաց վատ արիւն:
Թո՛ղ Ասորին դողայ ձեզմէ, ձեզ տեսնելով քաջասիրտ,
Երբ յաղթութիւն մենք վաստըկինք՝ փա՛ռք մեզ մընան պանծալիք:
Մի վըհատիք թէ թըշնամին է մեզմէ յոյժ բազմաթիւ,
Ո՛հ, յիշեցէք Բելայ առեն Հայկին բանակ փոքրաթիւ.
Երբ Տիտանեանք Հայերն տեսան՝ սարսուռ մէկէն ըզգացին.
Հայք յիրաւի քաջութեամբ ինչպէս Բելայ յաղթեցին.
Ոգի առէք, եթէ յաղթենք՝ կայ ձեզ փառաց մըրցանակ,
Իսկ թէ յաղթուինք՝ մեր քաջութեան պիտի թողումք յիշատակ:

Վաղն առաւօտ պատերազմի երբ փողք հընչեն՝ մեք ամենք
Կայծակի պէս մեր թըշնամեաց վըրայ, ո՜վ քաջք արշաւենք»։
Հայոց քաջերն երբ լըսեցին այն այս խօսքեր ազդելից
Բորբոքեցան ու սիրտ առին. հոն մաղթեցին զալ Երկնից.
«Կեցցէ Արայ. կեցցէ վեհաղն Հայաստանի մեր պարծանք»
Միահամուռ ասա գոչեցին, լերինք առին արձագանք։
Բայց նոյն գիշեր Շամիրամայն պէտք էր տեսնել վիճակ դառն;
Սարսռէին սըրտին թելերն, հանէր հառաչ դառնագառն.
Շուարած էր բոլորովին, եղած գագցես ուշաթափ,
Սէր յԱրայի սիրան բոցավառ կը տանջուէր անընդհատ.
Ձեռթ խելագար՝ աչքերն Երկինքն էկ վերցուցած զաստուածներ
Թշուառութեան իւր օգնական հայցէր սրտանց ու կ'ըսէր,
«Երկինք. ինչո՞ւ սըրտիս մէջ զայս արծարծեցիր սիրոյ հուր,
Ինչո՞ւ այսպէս սէր յԱրայիս տանջես թշուառս. ինձ գութ տուր.
Թէ Արայիս վաղն բօթ մահուան հընչէ ականջս, ո՜հ, Երկին.
Ի՞նչ ես յայնժամ պիտի ըլլամ, չանթահարէ զիս ուժգին.
Ո՜վ Սէր, բո՛ւռն են քու սըլաքներ, սըրտիս խորն են թափանցած։
Է՞ր զիս այսպէս անգթաբար տանջես հըրովդ բոցարծարծ.
Կը նուաղիմ. ո՜հ, մահացուաց մէջ կա՞յ ինձի պէս թշուառ,
Ո՜վ Թագ, ո՞րչափ քու ճաճանչներ՝ աչքիս թուին մո՛ւթ խաւար.
Անէծք օրուան՝ յոր ես տեսայ արեգական ճառագայթ,
Քեզ աղաչեմ, վեհ Արայիս չարմէ ըզգէրա, Ո՛րամազդ»։
Ըսաւ, քիչ մ'էն հա՛ Մորփէոս արտեւանանց տուաւ նիրհ,
Խո՛նջ անդամոց եւ խո՛նջ մըտքերն այժ եւ հանգիստ, բայց ի՜նչ վեհ
Խոր անդունդ մի խօլ անըրջոց բացուած առջեւ իւր կրկին.
Յանկարծ քունէն նէ արթընցաւ. մօտ էր ծագում Արեւին։
Մենոն եկաւ ներկայացաւ վըրան իւր պերճ Դըշխոյին
Աւնուլ հրաման, պատերազմի ձայն տալ երկու բանակին.
Տեսաւ ըղնէ մեծ վըշտերու մէջ եւ խորին թախծանաց.
«Տիրուհիդ իմ, հասաւ առեն տալու նըշան մեր զօրաց».
Սարսռեւ կրկին կալաւ Դըշխոյն, փոխուեցաւ գոյն երեսին,
Մանկան մը պէս նէ բռկսաւ աղաչել հոն Մենոնին.
«Մենոն, պատուէր տուր մեր զօրաց չը վընասել Արայի,
Ըզգուշացէք որ չըլլայ թէ նորա արիւն, ո՜հ. թափուի,
Ջանացէք զան ինձ ողջանդամ բերել վրանս զերդ գերի,
Կրկին կ'ըսեմ ըզգուշանան չըվընասել Արայի։



—«Պատկառ ամենքս՝ Ձեր վեհ կամաց», ըսաւ Մենոն հեռացաւ.
Եւ Շամիրամ խոր վըշտաց մէջ. —Նըշան մարտին տրուեցաւ։
Գարնանային էր ժամանակ, դաշտք գոյն գոյն ըզգեցած,
Պարզ էր երկինք, Փեբոս անտի իւր լոյս վըճիտ էր սփռած։
Մարտին շեփորք քարանձաւէն տայր արձագանք ահաւոր,
Եւ աղաղակ խուռն բանակաց ականջք կ'ընէր ծանրալուր։
Նիզակ եւ տէգ Փեբեան լոյսէն աչք ամենուն խաղքաէր,
Երկու կողմէն տեղացած նետ՝ կարկըտի պէս կ'անձրեւէր։
Վահաններու կոփիւնք կարծես ամպոց մէջէն դըղըրդիւն
Տալով՝ կու տար զօրաց խումբին սարսափ ու մեծ սօսափիւն։
Երբ սուր, նիզակ կը շողային՝ կարծես հուրեր երկընքէն
Կը հոսէին, ու աղեղանց լարից ճայթիւնք լուէին։
Երկու կողմէն քաջաց դըղրդիւն՝ երկիր գետնէն դըղըրդէր
Ուժգին բաղխիւն՝ նահատակներ յերկիր շատեր տապալէր։
Նետերն այնչափ օդին վըրայ պատեր էին հօծ 'ի հօծ,
Որ չէր հընար զարեւ տեսնել, արծարծեալ էր մարտին բոց։
Հոն էր Արէս եւ Բելլոնայ կեցած կառօք մի չըքեղ.
Մարտիկներու սիրտ բորբոքէր, որոց դէմք էր խիստ ահեղ։
Դիւցազն Արայ զօրաց գըլուխ անցած՝ առիւծ մի թուէր,
Շամիրամայ բանակին մէջ տանէր արեան վըտակներ։
Կարդոս աջէն, Կադմոս ձախէն՝ ուժգին հարուածք կու տային
Մէն մի մարտիկ առիւծ դարձած՝ սոսկացընէր Ասորին։
Մենոն այսչափ նուազ զօրաց տեսնելով մեծ քաջութիւն՝
Սարսափ սըրտին ազդեց, կարդայր յոյժ քաջալեր զօրքերուն։
Հոն Արամեան դիւցազն Արայ ընկլով մեծ կոտորած՝
Դիւցազնաբար վիրաւորուած ինկաւ. ու Հայք վըհատած։
«Ո՛ն, իմ քաջեր մի՛ լըքանիք, յառաջ տարէք դուք ըզմարտ։
Ինկաւ Արայ, այլ դեռ չընչէ, ողջունեցէք զիմ Նուարդ»։
Նուարդ վըրան էր Արային, եւ աղօթէր ջերմագին,
Տարին զԱրան արիւնաղանդ, ու յանձնեցին բժշկին . . . ։
Հասաւ սոյն բօթ Շամիրամայ ականջ, որ էր յիւր վըրան,
Արձանացաւ նէ նոյն կէտին, երեսին գոյնք շըրջեցան։
«Ջինադադա՛ր. գոչեց յանկարծ, տարէք զիս քով Արային,
Տեսնեմ գոնէ մէյմը նորա երես 'ի շունչ իւր յետին».
Ըսաւ. խելոյն մարտ դադրեցաւ. եկաւ վըրան Արայի
Եւ յայն վիճակ զան տեսնելով՝ Ներա իջաւ շանթ սըրտի։

Նուարդ, Կարդոս և Հայկանոյշ՝ անոնց դառրեկ նորատի
Արայի քով կեցած՝ արտասուք կը հոսէին դառնագին։
Սոսկալի էր այս տեսարան, չըփոթեցաւ Շամիրամ,
Իրեն սիրտն ալ յոյժ փղձկեցաւ, աչքն արտասուօք լեցուեցան.
Արայ յայնժամ ձայն արտաբեկ արձակեց առ Թագուհին,
«Տեսարգասիք անարգ կըրեցդ... ի՞նչ տեսարան հոս բացին»
—Ներէ, Իշխան, Շամիրամէ գոչեց, ու շատ նուաղում
Եկաւ վըրան, ու Մըտերմին ինկաւ յանկարծ թեւերուն.
Շատ մը զով ջուր հասցընելով սըթափեցին երեսին,
Երբ ըսթափեց, այս արտասուչ խօսքեր ուղղեց Արային.
«Արայ, այո, ես կը ճանչնամ իմ յանցանքներ այս կէտին,
Թո՛ղ որ աստուածք պատուհասեն ըզԹագուհին՝ վատթար կին.
Մի այլ յիշեր, ներէ ինծի. թո՛ղ որ վշտօքս չատանամ,
Մինչ գերեզման ես այս խըղճիւ պիտի տանջիմ յարաժամ։
—Ազնուական մի հայեցուած ըրաւ անոր մերս Արայ.
Ներողութեան էր այս հայուածք. լըռեց դըշխոյն շատ ահա.
Ներկերաձայն ըսաւ Արայ. «Շամիրամէ . . . Թագուհի . . .
Սարսափելի . . այն կէտիս մէջ . . գտայիր ես քեզ ներեցի . . .
Աստուածներէ խընդրեմ ներում . . մի տար վընաս Հայկազանց.
Ա՛հ. Հայաստան . . ողբամ իմ մահս . . քեզ սիրելով Հայաստան,
Անուանդ տալով իմ վերջին շունչս կուտամ վերջին յայս վայրկեան.
Նուարդ, Կադմոս, Կարդոս, և իմ սիրուն աղջիկս Հայկանոյշ . .
Ըսաւ. փըչեց իր վերջին շունչ. Հայոց գլուխն, մարդն անոյշ։
Լացան ըզմահն հէքն Հայաստան, սուգ ըզգեցաւ Արարատ
Այլ յոսկի տառ այս գըրոշմած էր, որտափայլն 'ի ճակատ
«Մեռաւ Արայ, այլ ողջախոհ մեռաւ գըլուխն գիւցազանց.
Այլ անարատ նորա ոգին թըռաւ կայան Ելիսեանց,
Մեռաւ Արայ. այլ նա անմահ յոգիս, 'ի սիրտ Հայկազանց
Անմահ է նա յէջս մատենից, զոր զայն յիշեն յաւիտեանց»։
Հոն դառնագին արտասուք Նուարդ թափելէ վերջ՝ իր որդւովք
Դարձաւ պալատ, ու Թախծանաց ըզգեստ հագաւ. կեայր սըգովք։
Իսկ Շամիրամ զի Արային հրաման ըրաւ զետեղել
Ապարանից վերնատան մէջ, ու պատուիրեց քով հըսկել։
Տըխուր էր օրն, տըխուր էր Հայն, տըխուր Հայոց մարտիկներ,
Նոքա քաջին մահուան վըրայ վշտագնեալ յոյժ կարեվէր՝
Վըշտարանջիլ Շամիրամէն էին այն օր մըտադիր,



Միահամուռ գոչեն ամենք—«Մարտի ենք մեք 'ի խընդիր.
Քինախընդիր եմք մեր մահուան քա՛ջ Արայի գիւցազանց,
Մինչև վերջին չիթ մեր արեան՝ պիտի կռուինք. չէ՛նք դադրած»։
Սոյն խառնաձայն աղաղակէն չըփոթեցաւ Շամիրամ։
Պատըշգամէն Հայ զինուորաց տուաւ այսպէս պատասխան.
«Ձէ՛ ձեր Արայ գիտցիք մեռած, ողջ է Հայոց մեծ Իշխան.
Զայն Յարալէզ Դիք լիզելով ողջացուցին. ողջ Արան։
Այս զօրութիւն մեր աստուածոց մեծ է, և դուք տո՛ւք պաշտօն
Ձեզ կանգնած եմ նոցա պատկեր՝ յարգեցէք դուք զանոնք. ծո՛ն»։
Շամիրամայ սոյն համբաւէն հանդարտեցան խեղճ Հայեր,
ԸզՇամիրամ մեծարեցին, խաղմ ըզնաւէին՝ էր դադրեր.
Իսկ Շամիրամ իւր ամբոխիւ դադար առած յայն 'ի դաշտ՝
Զուարճութիւն մի կ'ըզգար, կոչուէր տեղին Այրարատ։

## ՆՈՒԱԳ Գ.

Առաջինւոյն սիրով այնչափ էր բորբոքած Շամիրամ,
Որ յետ մահուան իսկ զայն աչքին բերէր առջև յարաժամ.
Չէր կրնար զան հանել մըտքէն, 'ի յիշատակ իւր Սիրոյն
Նորա որդին Իշխան Հայոց կարգեց. որդի հօրամոյն։
Նորատի էր սա պատանեակ, կայտառ, արի ու զգօն,
Հայրենասէր թոռ Արամայ, բարեպաշտօն յիւր կըրօն։
Սա առաջէն Կարդոս կոչուէր, զոր թագուհին Աստուոց
Ի սէր Գեղոյն՝ Արայ կոչեց, հռչակեց զայն Պետ Հայոց։
Այս Արայեան Արայն մեր քաջ յաթոռ նըստաւ երբ իր Հօր
Իսկոյն փութաց 'ի Մայր տաճար գալ շնորհակալ Դից հըզօր։
Այսպէս տեսած էր նա հօրմէն, այսպէս հրահանգ ընդունած,
Զի քան զամէն՝ պաշտէր զիւր կրօն, զայն 'ի բընէ սըրտ գըրկած։
Ժամանակն էր երեկոյեան, նոր մուտ պատեր էր աշխարհ
Եւ գեղափայլ լուսին իր լոյս նոր ցոլացեր 'ի տաճար.

Սոյն Արայեան եկաւ 'ի գումս, բազմատարած զայս մաղթանս
Սըրտին խորէն ջերմ նուէրէր. ինչ վըսեմ են սոյն վայրկեանք.
«Տէր Արամազդ. Հայր ամենից, հաստիչ երկնի ու երկրի,
Դու որ հօգէ զիս՝ բանական յօրինեցիր, փառք քեզի.
Դու որ 'ի Դիւց զիս երկիւղած ցարդ պահեցիր, փառք քեզի,
Դու՝ որ Հայկայ ս'Արամայ զիս զարմէ բերիր, փառք քեզի.
Դու որ զիս՝ հօրս սուրբ Աթոռին բազմեցուցիր, փառք քեզի.
Նոյնպէս փառք քեզ, ո Արամազդ, որ եմ ծընած հայազգի։
Պարտք մի ուրիշ նուիրական եկայ քեզ աստ վճարել
Պարտք՝ զոր համայն ճշմարիտ Պետք փութան սիրով կատարել։
Ծնրադրական փառք, գոհութիւն մատուցանեմ ջերմագին
Որ սուրբ կամօքդ դըրիր զիս հօրս յաջորդ և պետ Հայ ազգին.
Ես պատանեակ եմ նորատի, անճահ դեռ սոյն պաշտօնի,
Հեղ քո շընորհ, քան արժանույն կատարել զայն անթերի։
Յօղէ առատ իմաստութիւն չերթալ ճամբայ մի մոլար,
Արդարութեամբ իմ ժողովուրդ դատել, ըլլալ միշտ արդար։
Թէև դիտեմ, չեմ արժանի դըլուխս կըրել զայս պըսակ,
Բայց թէ ընես զիս իմաստուն, կ'ըլլամ մեծ քան ծեր իշխանք։
Այս կըխնդրեմ քեզմէ, ով Տէր, ինձ պարգևել շնորհ առատ
Որ Արայի հօրըս գահին՝ ես չըբերեմ մի արատ.
Քանի դժուար հասարակաց ըլլալ մի հայր ընդհանուր,
Ժողովրդեանս առջև մի զիս ըներ, մաղթեմ, կորակոր.
Տուր սիրտ արդար՝ որ ես ըլլամ պաշտպան որբոց և այրեաց։
Անոնց օգնելն՝ ինձ սուրբ պարտք մի՝ պիտի սեպեմ ես սըրտանց։
Զօրացուր զիս օրինազանց չըլլալ երբէք յիմ պաշտօն,
Զի որ Ազգին յարգէ օրէնք՝ սիրէ նա յոյժ իւր կըրօն։
Տուր ինձ ըլլալ խիստ մարդասէր, պարտուցըս մէջ ժիրաժիր,
Համեստ, բըգօն, նա՝ յոյժ ժուժկալ, ու միշտ 'ի ջանս անձանձիր։
Դեռ պատանեակ եմ, տուր շընորհ, չըծառայել վատ կըրից
Հեռացուր զիս 'ի չար կամաց, որ են կարի թունալից։
Ըզգուշացուր զիս շողոքորթ և մարդելոյզ անձերէ
Որք խանգարեն միշտ իշխաններ, անոնց բերան լի թոյն է։
Պահէ, ով Տէր, զիս 'ի մեղաց, ս'ի մոլութեանց բազմազգի
Ըրէ հուսկ զիս իմ նախահարցս արժանաւոր միջորդի.
Զիս Հայկայ պէս քաջ ազգասէր, և բարեպաշտ միշտ պահես
Արամայ պէս՝ հայրենասէր, ու ողջախոհ՝ հօրըս պէս։



Ասոնք, ով Տէր, փառք ճշմարիտ համայն Պետից ս'իշխանաց.
Մինչ իմ յետին շունչըս պահէ զիս 'ի մէջ այս շընորհաց»
Ծնրադրական սոյն մաղթանաց տուաւ վախճան, ու չխտակ
Դարձաւ պալատ. մ'ետ յանկոյին, եղաւ 'ի քուն անուշակ։
Տեսաւ յանուրջս սոյն նորատի Արայ՝ իշխանն Հայկազանց
Վեհ մի ոգեակ լուսապայծառ. որ էր երկնից մի յոգեաց.
Ոգին էր սա սուրբ Արայի, ողջախոհին Հայկազանց,
Որ յանկարծ հոս էր եկած՝ տալ սուրբ պատուէր զաւակաց։
Ճանչցաւ Կարդոս թէ իւր հայրն էր, երկրպագեց հոն իսկոյն,
Արայ անոր ձեռքէն բռնեց, կանգնեց 'ի վեր հաստատուն.
Մի երկնչիր, սիրուն որդեակ, եկայ քըքեզ տեսնելու,
Եւ կը բաղձամ սոյն վայրկենին հետըդ քիչ մը խօսելու.
Երկինք չըթանցդ ջերմ մաղթանքներ լսեց ու զիս հոս ղըրկեց,
Իմ միջոցաւ իւր սուրբ պատգամք՝ քեզ որդեկիս հաղորդել.
Եթէ մընաս հաւատարիմ 'ի հայրենի սուրբ կըրօն
Անբիծ 'ի վարս, ազնիւ 'ի բարս, ժիր քո 'ի ծանըր պաշտօն,
Երկինք քըքեզ մեծ շընորհաց պիտի ընեն արժանի,
Ընդունելի պիտի ըլլան ամէն ուխտերդ գովելի։
Ինչպէս դիտես՝ Շամիրամայ զոհ ես գացի վատ կըրից,
Դըժընդակ էր ստացած վէրքս՝ շատ փըշեցի իմ հոգիս։
Նոյն միջոցին քեզ ունէի տալ պատուէրներ կարևոր,
Անկար էի, մահն ինձ հասաւ, այս էր մեծիս կամք հըզօր։
Շատ պիտանի բաներ ունիմ աւանդելի քեզ, Կարդոս,
Որոց կ'ուզեմ խիստ ուշադիր ըլլաս, ժողվէ միտքըդ հոս։
Նախ քան զամէն՝ քըրոջդ համար Հայկանուշիս դեղանի,
Կ'ուզեմ խօսիլ, ասոնք իրեն դու հաղորդէ մի առ մի։
Թէև վըստահ եմ Նուարդիս հաւատարիմ ամուսնոյս,
Որ զայն պիտի լաւ 'նէ կըրթէ, չունիմ ասոր տարակոյս.
Սակայն և զիմ այս պատուէրներ մի մոռանար, տուր անոր.
Զի նորանի է օրիորդ, կարօտ իրատուց կարևոր։
Գեղանուշիս սիրուն աչաց ասամ ես համբոյր հայրական,
Թող այս խօսքերս իր ուշին մէջ՝ դրոշմէ սիրունք պատուական։
Ըզգուշանայ յընկերութեանց ընկերուհեաց իւր յոռի,
Ի վարս, 'ի բարս ըլլայ ազնիւ, ըլլայ համեստ աղջիկ մի։
Ընկերութիւնք լըպիրշ կանանց, աղջկանց նոյն և պատանեաց
Կ'ապականեն զան բընաւին, տան օրինակ միշտ չարեաց։

Համեստըն՝ ըլլան իր ընկերներ, զըրօսանք՝ անմեղ իր խաղեր,
Որով կըրթին միտք ու հոգի. դիզին անգին գոհարներ:
Համեստութիւն, աղնուութիւն ըլլան երկու իր թևեր,
Պիտի տեսնէ ո՞րչափ իրեն պիտի ըղձան դուլ ընկեր:
Գիտնայ որ չէ ճըշմարիտ սէրն 'ի գեղութեան՝ մի միայն,
Գեղութիւնն է փաղաքշանաւ, համեստութիւնն՝ անթարշամ:
Եթէ կ'ուզէ ունենալ նէ արժանաւոր ամուսին,
Թող նէ աղնիւ սիրտ և հոգի ընտրէ, է սէրն 'ի սոսին:
Դեռ չըփորձած մի պատանեակ, քաջ վեհայեալ իր մօրմէ,
Դեռ չըփորձած նորա բարք, փառք՝ սալ սիրտ անոր՝ անծանօթ է:
Շատ օրիորդք անխելքութեամբ տալով սրտեր՝ պատանեաց
Ցոյժ զըղջացան, երբ ըզգացին թէ անոնցմէ են խաբուած:
Քանի աղջկունք, տես, ճըշմարիտ սէր անոնցմէ չըգըտած՝
Ցախտ դըժընդակ՝ հալած, մաշած՝ կանուխ 'ի հող են իջած.
Ասոնք ամէն, գիտցիր, Կարդոս, ըզգուշք սիրոյ՝ անխոհեմ.
Իմ գեղանուշ՝ թո՛ղ լաւ կըշռէ, ըլլայ աղջիկ մի խոհեմ:
Հայ Իշխանի է նէ աղջիկ, կ'ուզէ ըլլալ փառք իմ տան,
Չըլլայ երբէք նէ պըճնասէր, տայ պըչրանք ընդունայն:
Հանդերձք պարկեշտ ու չափաւոր՝ պարկեշտութեան օրինակ,
Ըզգօնութիւն, համեստութիւն՝ օրիորդաց սան մեծ փառք:
Սորվեցուցէք անոր յառաջ գիտութիւններ տանընին,
Ասոնք աղջկան հարուստ օժիտք, ասոնք նէրա զարդք անգին:
Ըզգոյշ կենայ բոլորովին համդէսներէ անվայել,
Անոնք կըրնան նէրա մաքուր բարոյք շուտով խանգարել:
Թէ գըտնուի իր մօրը հետ՝ ծանրաբարոյ խիստ ըլլայ,
Պարկեշտութիւնն հոն իրեն զարդ՝ բերէ շընորհ գերակայ:
Պէս անհամեստ օրիորդաց՝ երբ տեսնեմ զան մարդկան մէջ
Պիտի գըզուիմ բոլոր հոգւովս, տամ այն տան սիրոյս վերջ:
Այսչափ խըրատք Հայկանուշիս համար ըսպած բաւական,
Հիմա խօսքերս քեզի, Կարդոս, պիտի ուղղեմ ամենայն:
Քեզ Տամիրամ ինծի յաջորդ՝ կարգեց ահա Հայ իշխան.
Ո՛հ, գիտե՞ս դու ի՛նչ պաշտօն այդ. և յո՞ր հասեր աստիճան.
Աստուածային է այդ պաշտօն. ծանրակըշիռ ու դժուար.
Ունի իր մէջ անթիւ պարտքեր, պարտք՝ զորս գըրին Դիք արդար:
Դու դեռ անփորձ ու նորատի, հազիւ տարիքդ՝ վեշտասան:
Ի՞նչպէս պիտի արդեօք վարես զայդ քո պաշտօն ըզբաղման:



Տե՛ս մի ազգի վըրայ իշխես, տե՛ս, ո՞յք էին քո նախորդք,
Հայկ, Արմենակ, Արամ ևայլն. տեսնեմ ինչպէս մեր յաջորդք:
Մինչև իմ մահս այդ գահ երբէք չէ ունեցած մի արատ,
Պիտի պահե՞ս և դու արդեօք, Կարդո՛ս, զանի անարատ:
Գիտե՞ս, ինչպէս ըլլալ պէտք է ժողովրդեան մի Իշխան
Որով կոչուի նա ճըշմարիտ մի առաջնորդ Տէրութեան.
Միշտ մարդասէր, միշտ անաչառ, միշտ անկաշառ ու արդար,
Այսպէս ըլլալ պարտի Իշխանն, որ չըլլի արհամարհ:
Այս յատկութիւնք թէ որ փայլին 'ի քեզ, որդեա՛կ իմ սիրուն,
Աստուածներու և մարդկութեան կ'ըլլաս, գիտցիր, դու հաճոյն:
Սիրես պիտի քու ժողովուրդ, որ անոնք ալ քեզ սիրեն,
Երջանկութեան անոնց խընամք պիտի տանիս որ յարգեն:
Խաղաղասէր եթէ ըլլաս ու տածես սէր ամենուն.
Գահիդ վըրայ յայնժամ կարող մընալ երկար, հաստատուն:
Մի ընդունիր երբէք պալատդ մարդիկ կեղծ ու մարդելյզ,
Չեն փափաքող անոնք բարեացդ, անոնք ունին մէն մի յոյս:
Աւագանին ու ընկերներդ՝ ըլլան մարդեր իմաստուն
Զանոնք քեզի խորհրդակից ըրէ՛ սիրով հաստատուն:
Ատեաններու դատաւորաց վըրայ հըսկէ անձամբ իր,
Ըլլան անոնք արք անկաշառ, արդար նոյն և անբասիր.
Հսկող եղիր ցանկ քաջարթուն քու տէրութեան մեծ գանձիդ,
Հաւատարիմ պաշտօնեայներ ունեցիր մէջ պալատիդ:
Ըզգոյշ կեցիր միշտ ընելէ ծախքեր շըռայլ, աւելորդ,
Աւանդապահ ես այդ գանձին, այլոց չըլլաս վերջ կարօտ:
Ամեն արհեստք. ճարտարութիւնք միշտ փայլ առնուն երկրիդ մէջ
Նա մանաւանդ, մըշակութեան երկրիդ տո՛ւր ոյժ ու հոգ մեծ:
Ճարտար ձեռքեր ու գիւտ հնարողն միշտ վարձատրէ լաւագոյն
Որով աշխարհ մեր օրէ օր կը զարգանայ հաստատուն:
Իշխան Ազգին՝ է վերջապէս ժողովրդեան հայելի,
Քեզմէ Հայերն առնուն պիտի այն օրինակ մի բարի:
Այս իմ պատուէրք՝ վերաբերին քու արքունեաց տէրութեան,
Հիմա ունիմ ուրիշ պատուէրք՝ որ են անձիդ սեփական:
Տիօք՝ մանուկ և անփորձ ես. հեռի կեանքէ ցոփական,
Սոյն կեանք՝ ըզմարդ կանխաժաման կ'իջեցընէ գերեզման:
Իշխան ես դու յոյժ նորատի, ծաղիկ է այդ քու հասակ,
Զգոյշ կեցիր որ չըծիւրեն զայդ մոլութիւնք զանազանք:

Թէ հեշտութեանց այդ տիղմ մէջ ըլլաս այժմէն անձնատուր
Քեզ ծերութիւն շուտ կը հասնի, խանգարի ձիրքդ բընատուր.
Տես պարմանիք մեծամեծաց, են հեշտասէրք, գրգասէրք,
Իրենց կայտառ դէմք են թորմած, մանուկ չեղած՝ եղան ծերք.
Զի բընական շաւղէ անոնք են մոլորած բընաւին,
Մէն մի դարձեր ահա կմախք, գոյն չէ մնացեր երեսնին.
Քանի՞ քանի պատանիներ ջահ հիմենեան չըվառուած՝
Ի գերեզման փութացուցին զիրենք՝ ախտովք ախտացած.
Կամ քանիներ յամուսնութեան, տեստանջանաց մաշուած՝
Տարիներով կան յանկողին, առնք՝ պտուղք հեշտութեանց.
Ինչո՞ւ շատերն չեն որդեծին, զի ոյժ նոցա քայքայուած,
Զիրենք ախտիւք մաշեցուցին, եղան գերի մոլութեանց.
Եւ կամ ինչո՞ւ են շատերու որդիք տըկարք, ախտաժէտք,
Քանզի անոնց ծընողք Լին մոլի և յոյժ անհեթեթք.
Ա՛խ, հեշտութեանց դառն են վախճանք, ատոնք ցեց և ուտիճներ
Են մարմնոյն մէջ, որոնք չըտան երբէք մարդու դադարներ..
Մի՛ պըճնասէր լինիր երբէք, իմաստութեան չէ նըշան,
Հանճար ու ձիրք ըլլան մարմնոյդ ընտիր զարդեր գեղութեան.
Կանանցաբար զարդարուող մարդ, նորասէր՝ ոչ իմաստուն,
Նա անարժան է, բառնալ փառք ճըշմարիտ, հաստատուն.
Իշխան ես դու, Կորդոս, քեզի աւագանւոյ աղջիկներ
Փափաքելով փառացդ վրայ՝ տածեն պիտի տենչ ու սէր.
Ինչ որ քըրոջդ համար ըսի՝ ձիրք քեզ ընտրէ դովանի,
Ընտիր ձիրքերն 'ի միասին բեր 'ն օժիտք գեղոյնի.
Թէ գեղութեան մէջ դու փնտռես երջանկութիւն առաջնին
Գիտցի՛ր, որդեակ, յոյժ սըխալիս, փընտռէ զայն մէջ իր սըրտին.
Քանի՞ քանի երիտասարդք գեղութենէ խաբուեցան,
Եւ ոչ երբէք այն պահանջած ճըշմարիտ սէրն չըգըտան.
Կարդա՛ յառաջ սըրտին մէջ սէր, ազնուութիւն՝ մէջ հոգւոյն
Համեստութիւն 'ի փառս, 'ի բարս, սուրբ միտք, մի կախոր հոյն.
Երջանկութիւն, խաղաղութիւն յայնժամ տուած թէ թեւ՝
Երկրի վըրայ ձեզ պարգեւեն ուրախութիւն անթերի.
Փառք, մեծութիւնք իշխանական չորս կողմէդ կան շըջապատ,
Մի՛ դու երբէք հըպարտանար, անոնք են քեզ մի աւանդ.
Մարդիկ իրենց մինչ յետին շունչ չեն երջանիկ յարատեւ
Քանի՛ թագեր և իշխաններ տապալեցան, ո՜հ, անտեւ.



Ըզգօնամիտ և լուրջ կեցիր, և վայելիցդ մէջ ամէն
Զգաստուածս յիշէ, սուրբ գոհութիւն, զի յաւիտեան մերք չեն.
Եթէ առնես քեզ ամուսին ըստ օրինաց կըրօնին,
ԶԱրայ՝ քու հայրդ յիշէ, ինչպէս սիրեր միշտ զիւր ամուսին.
Անոր միայն հաստատէ սէրդ, և ոչ բընաւ այլ մէկուն,
Այսպէս վայել առաքինեաց. Երկինք շընորհ քեզ հեղուն.
Եղէք մի սիրտ և մի ոգի. երկու անձով մի մարմին,
Ձեր տունն յայնժամ Երկինք կ'ըլլայ, և Դիք անգամ նախանձին.
Զիս վերջապէս յամուսնութեանդ քեզ օրինակ ըրէ յար.
Եւ դու եղիր այր ողջախոհ. ըսեն — «Այսպէս և քո հայր».
Թէ հայր ըլլաս զաւակներու՝ ունիս յայնժամ շատ պարտքեր
Սորվէ՛ անոնք Նուարդ մօրմէդ, Նէ տայ ընտիր քեզ դասեր.
Միայն թէ իմ զայս մի մոռնար խըրատ քեզի պիտուական,
Անոնց սըրտին մէջ լաւ դրոշմէ նախ՝ սուրբ երկիւղ աստուածեան.
Հըրահանգէ Դից երկիւղով. սորվեցո՛ւր զայս դասս համայն.
Սիրել միշտ Կրօն, սիրել միշտ զԱզգ, սիրել լեզուն Արամեան.
Օտարոտի բարուք սընեալ ինչպէս պիտի չառնուս կին
Նոյնպէս օտար լեզու 'ի տան՝ մի գործածեր բընաւին.
Յիշէ քու հաւդ հայրենասէր, որպիսի փայլ մեր լեզուին
Տուաւ, մինչև օտարք՝ հայոց լեզուաւ մէջ տանց խօսէին,
Մի՛ տար երբէք թոյլ մուծանել օտար կըրօն Հայաստան.
Եթէ մանէ, ջանա՛ մերժել. վըսեմ կըրօն Հայկական.
Հայ փարախէդ թէ ոք մեկնի յարել կըրօն օտարի
Գիտնայ՝ զի նա չէ արժանի կոչել երբէք մեր որդի.
Այն առէ այնպիսին զիս, ըզՀայկ, զԱրամ և էչ ազգ.
Պիտի՛ ատենք մենք ալ զանոնք, ատեն պիտի և աստուածք.
Սոյն պատուէրներ ընդունելով մերս Արայեան սոյն Արայ,
Լուսապայծառ Ոգին իսկոյն թըռաւ դարեր գերակայ.
Զարթեաւ Կորդոս յանուշ քընոյ, յիշեց իր հօր պատգամներ,
Այն ամէնք իւր Նուարդ մօր և քեռ խանդով կը պատմէր.

## ՆՈՒԱԳ Ե

Շամիրամ՝ որ Արայի դին էր դըրած յապարանն,
Գող ամէն օր կ՚երթար տեսնել շընորհալի կերպարանն.
Զայն զըմռսած էր դեղերով անուշահոտ զանազան.
Զայն ծնրադիր կը մեծարէր, զայն կը պաշտէր, յաւէտ յայն։
Կ՚ուզէր տեսնել անըրջից մէջ, զոյս կը մաղթէր յանմահ Դից
Սիրաբորբոք և սիրակէզ. 'ի դէմ նորա խանդալից։
Այն ինչ օր մի նէ բղձածուած կայր դիակին առընթեր
Քուն անուշակ աչքերն գոցեց. յանուրջս զԱրայն որոնէր։
Պղուտոնի իջաւ կայան. հոն բարապանն էր կեցած.
Ըսաւ, Հրաման ես կը խնդրեմ տեսնել մին յիմ սիրելեաց։
Խոժոռ հայուած բրաւ անոր նոյն բարապանն անծիծաղ,
Քարոն ըզքեզ չէ հոս բերած. քեզ մեծ պատիժ հոս, աւա՜ղ։
Թէև կինն հոս կայր 'ի սարսուռ նոյն դէմքերէ սարսափած,
Այլ բռնացած գեր զօրութիւն՝ շուտ երեսին զայս պոռաց.
«Գիտցի՛ր, ով դու, չեմ ես բընաւ 'ի սովական մահացուաց,
Դշխոյ մի եմ, դշխո՛յ հզօր սեռած զարմէ դիւցազանց.
Հրաման խնդրեմ Պղուտոնէն, Դժոխոց մեծ աստուածէն,
Իմ սիրելեաց մին տեսնելու, բաէ՛, յատուկ եկած եմ»։
Հոն Շամիրամ բաղասելէ վերջ մի վայրկեան ժամանակ
Եկաւ հրաման մըտնել այս տեղ ուզածին պէս համարձակ։
Ձեռ առնելով երբ կը տեսնէր վա՜յ վայնասու՜ն հոս ու հոն
Սարսափելով ետ ետ դարձաւ. ըսաւ ելլե՜մ ասկէ. ո՜ն,
Բայց ինչպէս ես իմըս Արայ մէյ մ՚ չտեսած. ա՜խ. մեկնիմ
Մինչև հոս գալս՝ ինչ սոսկալի տանջանք աչքերս կըրեցին.
Իմ սիրելի Արաս ես հոս պիտի գտնեմ. ո՜ն. փութամ
Դըժոխադէմ թող ոգիներ՝ շուրջըս պատեն խուռներամ։



Ըսաւ, կրկին նէ սիրտ առաւ. քայլեց քիչ մը— կանգ առաւ.
Ծանչցաւ ոգի մի զայն շուտով, «Դըշխոյ». դըշխոյն սարսռեցաւ.
Նինո՞ս էր սա, Շամիրամայ պերճ ամուսինըն նախկին.
Ցաւէ Նինոս էր վշտագնեալ, զի էր բարուք փառթար կին։
«Շամիրամէ, ինչպէս դու հոս յանդըգնեցար մըտնելու.
Անէծք, պատիժ և խոշտանգանք դո՛ւ ալ եկար կըրելու։
Ահա ինձ ժամ բարեպատեհ տեղալ գըլխուդ կշտամբանք,
Կին անհամեստ ու անհարազատ վիճակեցար ինձ յայն կեանք։
Սուրբ անկողնոյ ըզքեզ աստուածք պարգևեցին ինձ ընկեր,
Բայց դուն, աւաղ. միշտ պաշտեցիր քոյին փառթար՝ չար կըրքեր.
Ցուցայի ես ճըշմարիտ սէր, բայց եղաւ յոյս 'ի նանիր
Վա՛տ ընթացքովդ, վա՛տ կիրքերովդ զիս կենաց մէջ տանջեցիր։
Թէև գըլուխս ակամայուս կըրէի թագ արքունի
Հազար ախտս առ կենդանեաւս՝ երջանիկ օր ո՛չ տեսի։
Քու վաւաշոտ պոռնկական բարուցդ համար ամենուն
Վատահամբաւ եղայ. և ես միշտ նախատինք Ասորւոյն։
Որդիքս անգամ քեզ հոմանեացդ համար եղան թըշնամի,
Լուծեն պիտի աստուածք քեզմէ անշուշտ վըրէժ սոսկալի.
Աւաղ անոր՝ որ գեղութիւն խընդրէ միայն կիներէ,
Ցո՛յժ սըխալի, այսպիսի ու երկրի վըրայ դըժբաղդ է։
Թէ ըլլայիր հաւատարիմ ամուսին ինձ արքայիս,
Ոչ ես այնպէս ապերջանիկ կ՚ըլլայի մէջ միւս կեանքիս։
Ձեղծ քո բարոյք զիս ակամայ մատնեց մեղաց զանազան,
Որով այսպէս վիճակեցայ Պղուտոնեա՜ն յայս կայան։
Դո՛ւ պարագանց կին անպատկառ գըտար ամէն բանի մէջ
Քեզ յետ մահուանս էր անարժան արքունի թագս փառահեղ։
Թէ ըլլայիր համեստափայլ, առծէիր սէր անարատ,
Չէիր բերեր իմ աէրութեան չըքեղ թագին սոյն արատ։
Դարք վաւաշոտ ըզքեզ յերկրի պիտի յիշե՛ն յաւիտեան
Քեզ Ասորիք պիտ՛ անիծեն. նախատինք մեր Պետութեան, . .
Դըշխոյն եղած ամօթահար Նինոսի սոյն խօսքերէն
Անկէ շուտով նէ անբարբառ հեռացաւ յոյժ ամօթէն։
Քիչ մը անդին նըշմարեց հոն կին մը սաստիկ թախծալից
Որ վըշտագին հառաչներով՝ կոծէր զարնէր իր կըրծից։
Հարցուց Դըշխոյն. ինչեն, ո՛վ կին, քու վշտերուդ պատճառներ,
Հիմ այս կերպով կը տագնապիս, հանես սըրտէդ հառաչներ։

Ես մի թշուառ կին եմ, ասաց. կի՛ն անպարկեշտ կանանց մէջ.
Արժանի եմ կըրել ես հօս փոխան մեղացս վիշտ անվերջ.
Ա՜խ. չըգգայ հաւատրիմ իմ հարազատ ամուսնոյս,
Որու համար Դիք զիս արդար՝ զըրկեցին յոյս տուն վայոց».
Դողաց Դըշխոյն, կարծես շանթեր տեղացին հոն իր գըլուխ,
Ըզգաց զինքն ալ դատապարտուած Տարտարոսին յաղջամուղ։
Ծուռ հեռացաւ, աջն տեսաւ անդին ուրիշ մի թշուառ.
Հարցուց — Ո՛գի, ինչո՞ւ այսպէս հեծես և լաս դողահար»։
— Սուգս իմէ, պատասխանեց յայնժամ ոգին եղկելի,
Սուգս, զի եմ կին յանցապարտ, եմ ուխտադրուժ հըրեշ մի.
Քանի քանի անմեղ կոյսեր նաև անմեղ մանուկներ
Սարսափելի մոլորութեանց մէջ արկին, աւաղ, իմ ձեռքեր։
Քանի անձանց մոլորութեանց եղայ դաղանս չարժառիթ՝
Անթիւ մեղացս ահա կըրեմ ես այս պատիժ ճըշմարիտ։
Դատապարտեալ, տես, ոգւոց մէջ, եմ ամենէն հօս թշուառ
Այն տանջանքներ իմ նըմանեաց՝ են պատրաստած Դիք արդար»։
Բայլ մը անդին ուրիշ ոգի տեսաւ Դըշխոյն՝ տխրադէմ,
Մօտենալով հարցուց, «Ո՛գի, ինչո՞ւ աչերդ կը ցօղեն»։
— Ներբրովդ եմ ես, մա՛հկանացու, եմ նախահայր Ասորւոց։
Թագաւոր մի էի երբեմն, Տէր և Իշխան շատ մարդոց։
— Ինչո՞ւ հօս դու եկար հարցուց, անդէն Դըշխոյն Շամիրամ,
Թագաւորաց լաւաց կայան՝ չէ հօս. ինչ է քո յանցանք.
— Ես զօրաւոր մի բըռնակալ էի վերայ մահկացուաց.
Ամէն աշխարհ սարսէր իմէ, համարէի մի չաստուած,
Այլ Հայկազանց Հայկ նահապետ ապիրատիս չարութեան
Լուծեց վըրէժ, դատապարտեց մեղապարտիս այս կայան».
Դողաց Դըշխոյն. «Դո՛ւ ես Ներբրովդ իմ հայրերուս նախահայր.
Քու թոռներէդ եմ ես, ո՛վ Հայր, զարմէդ սերուած եմ յաշխարհ.
Յաջորդներէդ մին եմ գահիդ, գըլուխս կըրեմ չըքեղ թագ
Եկայ փընտռել իմս սիրելի, առաքինին այս էակ».—
— Առաքինի, գոչեց Նինոս, առաքինեաց՝ չէ այս տուն
Ելիսեանց սուրբ դաշտերու մէջ երթ փընտռել զայն միայն դուն»։
Իսկոյն ասկէ թըռիչ առաւ, Տարտարոսէն ելաւ դուրս
Խուռն ինչ հանգիստ առնելէ ետք՝ չուէր յեթերս 'ի յանհունս։
Երանելեաց վեհ կայարանն՝ հասաւ 'ի մարդ Ելիսեան
Լուսապայծառ բիւր էակներ հօս նըշմարէր զանազան։



Մըշտածաղիկ, յարափըթիթ դալարեաց աստ բուրաստան
Անմահութեան բոյր կը բուրէր. հոս էր աղբիւրն հեշտութեան.
Կայտառք էին աստ ցընծութեան երանելի էակաց,
Ա՛ստ անյատակ Ովկիանոս 'մայրմանց, լուսոյ, փափկութեանց,
Կայան էր սա, ուր մարդկութեան իղձ յագենայր կըշտանայր։
Արքայակերպ հօս էր Արայ. փայլէր յերեսն անճառ խինդ։
Նորա մըճիտ Ոգի ըզգաց իսկոյն գալուստ Դըշխոյին,
Ըզգաց զի նէ հօս էր եկած, զինքը տեսնել մարմնովին.
Գիտցաւ նաև թէ Շամիրամ, դեռ ըլլալով 'ի մարմին,
Էր անկարող մարմնոյ աչօք տեսնել ամեն փառք Դաշտին։
»Հարցուց դըշխոյ. ինչ է պատճառ քո գալստեան բաւէ ինձ»,
Դըշխոյն ափշած՝ կայ անբարբառ, նայէր յերեսն անքըթիթ;
Զայն դիտելէ չէր յագենար. արփիատիպ ցոլար ան.
Արայ այսպէս սկիզբ ըրաւ խօսիլ 'ի ձայն քաղցրութեան։
«Դըշխոյ, գիտեմ, առ ինչ եկար. լո՛ւր խօսքերու իմ այժմեան,
Ամէն մէկէ մէն մի օգուտ և դաս քաղէ փրկութեան։
Երանելեաց է այս կայան, ուր կայ Արայն Արամեան
Զոր քո կըրից ըրիր մի զոհ. բայց տես, յոր կայ խնդութեան
Հո՛ն 'ի գեղն իմ ըղձայլէիր, հօս ըղձայլէ 'գեղ հոգւոյս,
Տես, անմահից հետ ինչպէս ես՝ հօս կը լողամ յանճառ լոյս։
Զիս զըրկեցիր եղծուն կեանքէ. տես ես զանեղծն ըզգեցայ,
Փոխան թագիդ թառամելի՝ աստ զանթառամն ըստացայ։
Թշուառ ես դու կոյր կըրիցդ մէջ, թշուառ չառնես. ո՜հ, ըրիր
Նըսեմացուցիր իմ Հայրենիք 'ի սուգ, 'ի վիշտ, 'ի մոխիր։
Սէր ողջախոհ՝ անմահական կեանք աստանօր պատրաստէ.
Սէր բղջախոհ՝ այս գեղեցիկ կեանքէ ըզմարդ կը զրկէ.
Քու վատ կըրիցդ իմ Պետութեան Հայ դիւցազներ՝ զոհուեցան;
Անոնց արիւն բողոք կարդայ առ Աջն հըզօր աստուածեան.
Լացէ՛ն ծընողք որդւոց համար, համակեցա՛ն 'ի մեծ սուգ.
Ապառաժ էր միթէ քո սիրտ, չըշարժեցա՞ր, ո՛վ անգութ։
Եղո՜ւկ քեզի, Շամիրամէ. կարդա 'պաշաւ քո մեղաց
Ջինջ՛ովքաւէ ամեն մեղքերդ, թէ ո՛չ դըլուխդ մե՛ծ հարուած..
Թագուհի ես, աստուածք վըրադ են սահմաներ շատ պարտքեր,
Որբոց, այրեաց, տառապելոց բաց գըթութեան քո գանձեր։
Ըրէ գործեր առաքինի, որովք հաճոյ աստուածոց
Ըլլաս. ցուցուր քո գըթութիւն նոյնպէս ծերո՛ց անկելոց։

Իմ Հայրենիք յոյժ արտասուեց գործոցդ համար անողորմ
Բայց են աստուածք երկայնամիտ. դիմէ առ Դիս մեծողորմ.
Մաղթեմ յերկնից տայ զեղջ սըրտիդ. երթաս բարեաւ, Տամերլան,
Մի՛ մեղանչեր Հայաստանի. յայս դաշտ ըզքեզ սուրբ տեսնամ»։
Ըսաւ Ոգին շընորհագեղ, աչքէն եղաւ շուտ անհետ.
Բացաւ Դըշխոյն քընոյ աչքերն, արդէն ծագած՝ արև հեշտ։
Շարժած էր սիրտն, զի՛ զղջ իր մեղաց համար ըզգայ 'ի հոգին,
Այս տեսիլներ Նէ մի առ մի պատմեց իրեն Մտերմին.
Եւ հօն գոչեց — «Երնէկ անոնց՝ որ կեանք վարեն ողջախոհ.
Թշուառ և զուրկ միշտ ճշմարիտ կեանքէ՝ որ են թըղջախոհ»։

ՎԵՐՋ ԱՐԱՑԻ



[illegible] ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍՍՀ-ССРА.
им. А. Мясникян
[illegible] ԱՆ.

15467

2013